

# ԿՈՌԻՑ

## ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀԵԱ

ՀՈՆԴԻՍՄՈՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵԿ ԲԱՐՈՎԱԿԱՆ

ԼՈՒՍԱԿՈՐՈՒԹԵԱՆ

Դ. ՏԱՐԻ. 1863. ԹԻՒԸ.

Օ ԳՈՍՏՈՍ

ՀԱՅԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գ. Շ-Ք. ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՆՈՒ

1842 թիւ. օգոստոսի 12. Մաղարթու Նա-

լսավկայի մակրումը :

Հարունակոթիւն:

ԵԱՅ ԺԱՄԱՆԱԿՀՔԱՉԵց, շարունակեց միայնակեացը. հայ-  
րըս պանիմի հազար ձիաւորի գլուխ լինելով քեարիմ խանի  
մահուանից յետը նորա որդւոց զօրավարաց և թոռանց կողմը  
հաստատ պահելով օր լստ օրէ երեւելի ոմն եղաւ և բաց ի  
հօրիշը մնացածէն շատ հարստութիւն ևս ժողովից էն կը-  
ահաների մեջը. երբ միւսները, ինչ ունեին չունեին կարյուում  
էին և Ասեցի. էն ժամանակը իւրաքանչեւը ժողովը ազն.

ՏԵՇԵԱ ԿԱՆԿԱՆ Դ. ԹԱՐՈՎԱԾ. ԿՐԵԱ. 460.

տիրապետող և երեւելի քօրավար կամ քաղաքապետ գիշեր ցեղեկի էր անում ինքնազգլուխ իշխել ամէնի սրտիցն էլ շահութիւն և թագաւորութիւն էր անցկենում վասն որոյ բոլոր Պարսկաստունը մած խառնակութեան և երեւմանց մէջն էր : Ա՛չ որի խօսքին, խստմանցը և հաւատարամութեանը չէր կարելի հաւատ ընծայել : Գլխառելու, մարդգաւազանութիւնը, երդ մնաղ տնցութիւնը, աչք հանելու, որկեսպանութիւնը անդամ հասարակական պատիժներ էին : Աւ կանչնէրնիս սսլորած էին ամենայն օր լոել արիւնահեղ պատերազմների համբաւնէր, մէկզմէկու կոտորել միմեանց վրայ յառնել, քաղաքաց աւերու մն : գերութիւն, ասպատակութիւն և այլն և այլն :

Ես ևս էս գառն ժամանակու մն քամաբախտութեամբ, նոր ինօր սկսել էի աշխարհին համը հոտը առնելու, ինձ մարդկանց կարգումը դասել, նոցա մէջը խառնվել և պատերազմական լուրերը հետաքրքրութեամբ լսել: Վաւզում էի. երբ կը լինի արդեօք, որ ես ևս ականատես լինեմ լսուած անցքերին և կամ ներգործող էն արիւնահեղ պատերազմներին : Ահա այս տեսն էր, որ ստիպում էր ինձ ամենայն օր հրացան ձգել ձի նսաել, թուր, հրացան խաղացնել ըստ որում հայրս տանը չէր, և մօրս էլ աւելի չէի հնապանդում, վասն որոյ ծառայքը ինձ էին ստորագրուած, ինչ ցանկանում էի, պարտ էին կատարնը և վայ էր եկած նրան, որ համարձակվէր ինձ հակառակ խօսել: Մայրս շատ անդամ քաղցր խօսքերով կիրատէր և երբէք չէր զարանալ: Հիմի մտածում եմ որդի, ասեց միայնակեացը որ մայրս թերեւս վախում էր, իմ խիստ վարքիցս, չլինի թէ գնայի մասնէի մեր ընտանեաց քրիստոնէութիւնը : Խաղէս էնպէս, ես ինչ որ ցերեկը կը կլսէի պատերազմների վրայ, կամ կմահէի, զիշէրները երազումա կանանէի : Ա՛չ ոք չէր կարծել որ ինձ նման մոռւնդ առած զգուշությամբ տանը պահեծ և էն էլ քրիստոնէական բարոյականութեամբ, ժամանակաւ պէտք էր հաւատս ուրանայի և երիտասարդութիւնս յոփութեամբ և շուայտութմամբ որպէս երեւելի բարբարոս Պարսիկ, անցկացնէի:

Միայնակեացը էս վերջին բաւերը շատ ազդողական կը ըիւք բերանիցն հանեց, ու զշշիս քաշ ձգեց մնաց հարուստ



մի անդամն էս կողմը էն կողմը շուռ-մուռ տաշով ապուշ նայելով վեր առաւ, որդիս ուզումես կրկնա հաղորդել տասնինձ աշխարհիս զեղխութեանը չե շնորհակալ եմ եւ չեմ ընդունելոյ ։ Էստունք, առեց և ձեռքէրը հեռացրաւ ։

**Ո'**ւ պատասխանեցի ոչ հայր սուրբ իմ միտքս երբեք չար կողմը չէքել համար քան մի լիցի-սոքա էնակն ըբանէր են որք ձեռու առաջնէրնուսէ և քեզ հարկաւոր կդան ։

**Միթէ** առանց սոցա չիարսլացայ ևս այնքան տարինէր այնքան ձմեռնէր անցկացնել էս սարերի գլուխն ։

**Անցկացրիր** էն ժամանակը հայր սուրբ երբ երիտասարդ էիր բայց այսուհետեւ ։

**Սոսուծով** վերառ աւ նա Աստուծով էլի կարող եմ անց կացնել ։

**Ես** չուզելով շոտ ստիպել նրան թողի էս ուուրիշ առարձ կայի զիմեցի ։ Հայր սուրբ ասեցի էստէս բաները ոշինչեն ։ Էլի լաւ է որ ժամանակն էրնիս անցկացնենք մին խօսակցուաթիան վրայ որ արժու մն ունենայ անդրեմ շարունակիս և բեկուան կիսատ պատմութիւնը որ ինձ շատ ախորժելի թու էց ։

**Լաւ լաւ** պատասխանէց համ համ սկսենք շատ ես վաւզում ինչ ասեմ քոյ զիւթիւ խօսքերովն ինձ համոզեցիր ասել տալլ սկսել եմ և էլ ճար չկայ պէտք է շարունակեմ ։

**Ե՛հ որդեակի յաւելացրէց էհ որդեակի երեխն ինչ որ պատմեցի վեր իւ վայր կամ լսած էի կամ երեխայութեանն ժամանակը ականատես եղած զիստես երեխայական յիշողութիւնը որքան և սուրբ լինի դարձեալ շատ պահասութիւննէր կունենայ բայց բայց այսուհետեւ ինչ որ պատմելոց կմ կարող ես լաւ մտառութեամբ ականջնջնել և հաւատալ որպէս հայելումն աչաց առաջնէն նկարազբուածէն մինչեւ ցայտ սօր էն ամէնը ։**

**Հաղիւ թէ վերակրկնէց միայնակեայը հազիւ թէ 16 կամ 17 տարեկան կլինէիս երբ Զաքի խանի սպանութիւն լսանք Քանի միսօր մինցաւ շանցաւ հօրա սպանուելոյ և նորա ձիաւ որպէտի Շուլստրի մէջը ցրուելոյ բօթնէլ մեզ հասաւ Մօրս շամոզգալի էր հօրս առ անց քահանայի և եկինչեցական խորհ**

հրդեանը թաղումը։ Տապը թռուման։ պարգեեց մին հայի  
 և քսան թռուման մին քահանայի, որ զնան Շուլտար, են տեղ  
 քառասուր որ ծածկաբար գիշերները գերեզմանի վրայ ա-  
 զօթք անեն։ Սազմոս կարդան, և քառասուն աղքատաց, թիւ  
 ազգե, որ լինին հօթն օր հաց տան։ ես կերպ վարձքերը—  
 որ մօրս մտօքը՝ ընդունելի պէտք էին լինել Աստու ծոյ ամ ոռի  
 առողջին։ ինձ շատ ծիծաղելի էին երեսում։ Տես որքան անզդայ  
 սիրու ուժեկի և վատ նշանները իմ արագայ կենաց համար,  
 էն օքէրիցը սկսած էին արման գծել սրառումն վասն որոյ և  
 ժամանակաւ հաւատս ուրացայ։ Մայրս մին քանի օրից յետոյ,  
 ինձ ևս երդմամբ և անէ ծքով թէ չկատարեմ պարտաւ որէց երը  
 և լինիր ժամանակաւ Շուլտար պատահի գնալու մասիկ շա-  
 յէրի գեղէրիցը քահանայ բերել տամ և էն քրիստոնէական  
 խորհուրդները կատարել տամ։ ինձ որդի մօրս  
 ատածները և պարտաւորելը ծիծաղական բանէր էին երեսում։  
 Միայնակիցիսաչքէրը հստունք խօսելիս լցուեցան արտասունցով  
 փոքր ինչ համբերէց, և ապա շարունակէց։ Հիմի եմ հաս-  
 կանում որ հասակիս բերմունքը և անզուսով կիրքն էին, որք,  
 առիսումէին։ ինձ արտաքուատ արտմութիւն ցոյց տալ։ և  
 ներքուստ անզդայ մնալ, և թերես ուրախանալ հօրս մահ-  
 ուան վրայ։ Մասածումէի, ինքնաղլուի թացի այսուհետեւ,  
 միամօր որդի, որ ամենայն տան իշխանութիւնը և կառավա-  
 րութիւնը հաղեւ ըստ ամենայնի ձեռքս ընկան, ինչ ուզեմ  
 կարող եմ անել և ոչ էլ չե համարձակուիլ արդելառիթ  
 լինի, ոչ ոքից էլ վախ, աչ չե պէտքաք և ունենամ երը կլինի էս  
 սղոյ օքէրը մին անցինայու որ ես էլ անսանձ ուր ուզեմ գնամ։  
 Բնչ կամենամ անեմ։ Վարձումէի, հօրս աստիճանը ինձ կը  
 տան, առանց իրիք արդելման բայց ո՞ւ ո՞ւ զօրագլուիը ո՞ւ իշ-  
 խողը, ո՞ւ թաղաւորը պիտէր տար երբէք մաքէս ևս չէր անց-  
 կինում թէ Պարսկաստանը այժմ հերիւրաւոր աէրէր ունի։ Որ-  
 քան գնումէր, էնքան Պարսկաստանը, խաւնվումէր և շփոթ-  
 վում։ Գիշերները Շիրազ տանը քնելը անե որի համար առանց  
 գգուշումեան երկիւզէր բայց ես մրափած երևակայած ապագայ  
 վառաց յուսվը թմրած կայի։ Կարաւանները վաճառականաց

երթեւկութիւննէրը ի վաղուց չեւտէ գաղաքածէնի; Ամենայն  
տեղ թամադութիւնը ու սովուն եր թափառորում: Արակէս Շիւ-  
րացուանայնպէս և միւս Աքալաբենէրի բնակիչքը երկու ջրիմէջ  
էնին մնացած չէնին իմանում որ բռնաւորի կողմանիկից լինին  
կամ որի չէնազանդու ինչ թէս մինին քնիունում էնին, յան-  
կարծ մի: Ալ զօրանալով համար զօրքով գալիս էր նրան գուրա-  
մանում ու ինքը աիրապետում ու բնակչացը ուուժում: Միտա-  
րուց աւելի հօրս մահթւանից յետը մնացի տանը պարապ-  
սարապ միշտ խօսքս էնէր մօրս: թէ տուր ինձ զօրական ընկմ-  
ակա թէ ոչ առանց քոյ հրամաննին կիալսչմ: կերթամ մին  
զօրապարի կյայտնեմ ովլ լինելու և նրան ծառայութիւն անե-  
լի կամքս: Մայրս տեսնելով ինձ չէ կարողանում համարել  
զապել լիսն որոյ համաձայնէց և խոստացաւ կատարէ իմկամքը  
միայն թէ համբերեմ: մինչև մտածենք առեսնենք որին է, ամենից  
վերայ աիրապետում: նրան ինչդրէ, նրան յանձնին ինձ: Նրա  
համաձայնութեան մեծ պատճառն էլ էն էր որ տեսնում էր:  
որ ըստ որէ կարողութիւննիս ձեռներնուցան զնում էր ովլ վիր-  
էր կենում: ովլ գալիս զօրքով Շիրազ մտնում: նրանց որք ահ-  
րութեան ծառայողք չէնին, տուագում էր: ուժով վիզ, ձի,  
զբահ, մրնչւ անէրիցը ուտելիք ինչ ունին, չունին առնում  
էր և բերում: վասն որոյ ինձ ուղարկէր: տալ մինին, որպէս զե-  
մին պաշտօն ունենալով կարողանայի մեր կայքը պահանել:

Ես ջրէրումը Սադղ լիսնը Շիրազ եկաւ եղքօր որիւնյի  
Արևլքաթ խանին կախուառորելով և կուրացուցանելով բռնա-  
ցաւ: Մայրս էլ չկարողացաւ հօրս մահուան վերայ և մա-  
նաւանդ իմ անզուսով լինելոյ ցաւը տանելու հիւանդացու-  
քանի մի ամիս բաշեց մեռաւ, երբ և ես Յանցի մինակ ինք-  
նաղլուս և անտէրունչ: Երկար ժամանակ չքաշեց շատ ժա-  
մանակից մեր տանը մնացած վորձած ծառայքը, իմ թերթեւ-  
ւամիտ երիտասարդութենէս և անսանձ ցոխ կեցութենէս  
յուստհառուած յըրուեցան դուրս գնացին: Ես ես այսու-  
շեմեւ բարեկամս և թէ շնամիս շնանացլով ու մին պատրահում  
էի, առանի հետ էլ մրակերպ էի վարդում: Վատ մարդիկ շու-  
տով կարողացան ինձ գտնել և ընկերակից լինել: Բնական ես  
անփորձ և թեթեւամիտ նոքա ես աւելի պատճառ եղան բարք

ու բարոյականութիւն եղծանելոյ ու գլխէ հանելոյ աւերընել  
մոլութեամբ։ Պարսից կեղծաւորութիւնը խորամակաւթիւ-  
նը, ստուխոսութիւնը ստեղութիւնագանցութիւնը, որքի սկզբանէ  
առելիքէին անձ, օր ընտօրէ ընտելացան փնձ և ապաւորեցան  
դնութեամս մէջը ։ Փոքր փոքր հւնեցած չունեցած վասնեցի,  
զրաւ զրի հետզետէ վարաստէրներու տուի և  
մնացեալը անպիտան ընկէրնէրիս հեռը վայելեցի Երբ միացս կոյայ  
արածնէրս կդողամշաւիմ թէ Ենազէս Էնայիսի առաջի-  
նութեամբ մեծացած երեխոյա էնայէս վատ աստիճանի հասայ-  
նրէք չէի մտածում թէ այն հարասութիւնը կհասնի ։ Եի-  
րազդոր Ասիոյ զեխութեան վարժատունն էր, ինձ նմանն երի-  
տասարդնէրին շատ էր լայտացրել ։ Զօրաց մէջը ծառայութեան  
սէրը որ մօրս կենդանութեան ժամանակը արձարձվումէր  
սրածմա զեղինութիւնը հանցըրած էր ։ Երբ ունեցած չունեցած  
Երբ ունեցած չունեցած ամէնը ձեռնից գնաց ու էլ  
ոչ ինչս չմնայ ընկերնէն էլ ինձ դատարկ տեսնելով, հեռացան  
ինձանէ ես նոր ի նորոյ սթափեցայ ։ Փոքր ժամանակ դատար-  
կագրութ բամի կուլ տալու շշեցի հէնց աղքատութեան ճա-  
շակն առիւ կրկնեալ զօրաց մէջը մտնելոյ սէրը արձարվեցաւ  
մտքումա վասն որոյ մին օր ներկայացայ իւրեան Սաղդ խա-  
նին, յայտնեցի խորհուրդա ։ Նա հանակիս կերպարանքիս  
խորը նայելով հարցրեց ավես և ո՞ւմ որդի ես ։ Պապիս և  
հօրս անունը երբ լսաւ պարսկական ճարմասանութեամբ գո-  
վելով նոցա և նոցա քաջութեւննէրը ու հաւատարիմ ծա-  
ռայութիւննէրը ։ Հրամայէց զօրաց մէջը ինձ հարիւրապե-  
տութեան աստիճան աան ։ Են օրերը ես ինձ ամենաբազգա-  
ռոք անձն էի կարծում աշխարհին միջն։ Են օրերը կազմակերպութիւննէրը գու-  
գիւղ նոցա և նոցա քաջութեւննէրը ու հաւատարիմ ծա-  
ռայութիւննէրը ։ Փոքր ժամանակ անցաւ, զաքի խանի որդի Ալի մուրատ  
խանը եկաւ Շիրազը ովաշալեց մէծ զօրքով ։ Բերդումը հացը  
մաշարեղէնը եւ ամենայն ովատելիքը Էնքան սուզացաւ մինչեւ  
շան և կատուի միուը ։ ըր կաշիքն անազամ պաշարվածնէրը  
միմանց ձեռքէն խումբէն կափում կւտում ։ Քանի քանի ան-  
դամ աղիւնահեղ կախներեղան ։ Այդ էին ձայք որք ու դարձեալ  
վէն կռւէն կատորվեցան ։ Ձայք էին ձայք որք դարձեալ ։  
գարձեալ էն զառը օրերոյ մը հօրս յիշատուկի և անը-

Աւան համար ժած կայրար ինձ ու աելքօք օգնու մէին և Յս . .  
 որդիականիս ։ ։ ։ երախտամոռացան էստունցով էլի շը-  
 զզացի նոյն բարերարութիւննէը չզգացի թէ երբեմ ևս  
 էլքրիստնէութիւն էի արած ։ չզգացի թէ նոյն ազգակից  
 և եղայր եմ պարտաւորութիւնս է նրանց երախտեաց փո-  
 խարէնը լսութիւն չանեմ գոնէ վատութիւն ևս չմաս-  
 ծիմ նոյն համար ։ ։ ։ ։ ։ էնպէս էի կարծում թէ  
 նրանց պարտաւորութիւննէ ինձ պատուել և կերակրել ։ Յս  
 անխղճմանակը ս նրանց ամէն ըստութեանց փոխարէնը մատնեցի  
 նոյն Սադղիսանին երբ իւր մեծամեծօքը մին օր անց էր կենում  
 ինձ պահ տուած աշտարակովը ասելով թէ Հայք որք բերդումը  
 պաշարված են ։ ինչի չեն զինուոր տուիս մեզ և աջակից չեն  
 լինում էսպիսի հարկաւոր ժամանակին ։ Սրանից էլ աւելի ա-  
 պերախտութիւն կլինէր արդեօք աշխարհքումն ։ Քաւ լցոնի ։  
 Սադղիսանի հրամանաս բաւուութեամբ Հայերիցը Զոկովի  
 յիսուն երիտասարդ զրոշեցին յանձնեցին ինձ և ևս խառ-  
 նեցի իմ սատրաղելոցը ։ Հայերը շատ ընծայ կաշառք էս  
 կողմը էս կողմը տուին որ զինուոր չտան ։ Բայց ոչինչ չկա-  
 րողացան շնել որովհետև հակառակորդներ էին ևս իւրեանցից  
 ծնուած ։ Փոխանակ էն յիսուն Հայէրին միսիթարելոյ և քա-  
 ջալերելոյ ։ սախումմէի պահք չզահեն իւրեանց կրօնի վճայ  
 հաստատ չմնան և որքան պաշարեցէն միւս Հայէրն ունէին  
 մըրանց ուժովը բերել էի տալիս բռնութեամբ ու բաժանում  
 էն Պարսիկ զօրականացը որք ինձ Ստորագլեալ էին ։ Էս առ-  
 մենայն անիրաւ ծառայութեանց փոխարէնը երկու հարիւր  
 մարդոյ գլուխուոր եղայ և խելայ ևս ստացայ Սադղիսանին ։  
 Մատան ջութիւնը մինչև ցայսօր մաշումէ ինձ էն անցքի  
 համար որ մին զիշեր պատահէց ես հարբած ստիպեցի մի Հայ  
 երիտասարդի նսախլ մեզ հետ ընթիւլ ։ Աղրմելին չկամեցաւ  
 թէ էս շաբաթ պաս է մեզ մեք մեղէն շենք ուստել ։ Ես  
 չհանգուժեալ իմ կարծեցեալ նրա յանդուութեանը և ան-  
 հնագանդութեանը ։ ինկ և իսկ կանգնեցի և գաշնակով  
 խփեցի սրտի մէջեցը դիաթաւալ վայր ձգեցի ։ Վահ բար-  
 րաբռամութեան ։ փառք համարելով ինձ էս ամբարշտութիւնը  
 հրամայիցի դիակը բաշ ամրով առնեն ձգեն ողբրմել ոյ ընկերաց

առաջը : Տես որդեակ ինչպէս կարսափելին էն չայերը . երբ կտեսնէին անմեղի արիւնը երկիր թափած և անկենդան դիաւ կըն յանկարծ առաջէրնուն ձգած արիւնաթալթաղ : Ի հարկ է Սադղ խանը ուրախ էր ինձ նման բարբարոս զօրականնէր շատ ունենալոյ համար—բայց Աստուած է, որ իւր ամենաարդար դար դատաստանաւը ամենայն դործոյ փոխարէնը կը հատուցանէ : Քանի մի օր չանցաւ, ես և ինձ նման հազարաւոր յանդուզն զինուորականը Սադղ խանի հետ ձեռ—ոտէր նիս կապոծ կաշկանդած գերի արձանացանք Սկեանդար խանի զօրականաց առաջին :

Լրտեսները լուր էին բերած, թէ Ալի Մուրատ խանը իւր ծանը զօրքովն դնաց Ասովահանու վրայ, և թէ փոքր զօրք յանձնած է Սկեանդար խանին Շիրազու պաշարին շարունակէ, Պաշարեալք էս լսելով միամտացանք ու սկսեցինք անզգուշ շութեամբ պահպանել մեր տեղերը, մանաւանդ որ Սադղ խանն էլ հրամայել էր ովք կարող է, ծածուկ պաշարողներիցը, գըշնայ շրջակայ տեղէրիցը պաշար բերէ : Մտքումը զրած էր սր քանի մի օր պաշարեղինը. շատացնէ ու յանկարծ յարձակաւի պաշարողաց վրայ, ըստ որում պաշարեալները պաշարեղինի ողութենէն լքուած ու անզօրացած էին: Բայց Սկեանդար խանը, որ թէպէա երիտասարդ էր, սակայն աւելի զգոյշ և խելացի զործ աեսաւ քան թէ հինաւուց կոռուարար Սադղ խանը : Մին դիշեր, երբ պաշարվողքը միամիտ քնած էին, Սկեանդարը էնպէս յարձակուեցաւ բերդի վրայ, որ ինն ամիս պաշարելուց յետը, հաղիւ առանց ընդդիմանուլոյ տիրէց բերդին : Սադղ խանը ահիցը մահուան դեղ կերաւ և մեռաւ, բայց նրա որդիքն սպանուեցան, և քեարիմ խանի որդւոցը, որոց ձեռքի տակին ինքն ծառայած էր, աչքերը հանել տուաւ : Պարօիկ զօրականացը և քանի մի երեկեկացը, ինչպէս գերի, բանսարկել տուաւ, որպէս զի Ալի Մուրատ խանին ընծայ քաշէ, և թէ, եթէ նա կամենայ, թող գլսատէ ամենին : Կարող ես երեակայել թէ էս ձայնը ինչ երկիւղ—արհաւիրք էին ձգած մեր սիրտը : Էն երկելի յաղթող քաջ երիտասարդը, աղդուած վերին տեսչութենէն, հրամայէց Հայ զօրականնէրին աղատ թողնուլ երթան

իւրեանց տնկը, ասելով թէ ինձ քաջ յայտնի է, գոքա ան-  
պարտ են և բռնութեամբ են ժողովված էս տեղ :

**Ա.մ.** Մուրատ խանը երբ լսաւ Նիրաղի առման լուրը,  
Ճանապարհից վերադարձաւ, առօք փառօք մոտաւ քաղաքը :  
միւս օրը յիսունաշափի մեծամեծաց զլինէրը հրապարակսւմը  
կտրել և աչքէրը հանել տուաւ, ի վերջոյ Աքպար խան Քեա-  
բիմ խանի օրդին իւր քարերարն ես էս պատճիցը ազատ չը-  
մաց ; Երևելի ոմն լինելը էն օրէրը մեծ վտանգ էր . ամե-  
նայն ոք ցանկանումէր զինքը հասարակ մարդկանց դասը  
շարել : Այնու հետեւ մինչեւ տասն օր, կալանաւոր զօրագլխը-  
նէրին և զօրականնէրին քսանով, երեսունով հրամայումէր, որ  
հանեն բանտերէն, ցերեկով կամ զիշերով գլխատեն ու զիակնէրը  
ձգեն բերդից դուրսը : Ես միջոցին տարակուսանաց մէջը տր-  
բորլում մաշվումէր ամենիս սիրող, թէ երբ պէտք է զըլ-  
խատվելոյ կարդը մեղ հասնի : Թէ բանտարկելոցը գոնէ կուշտ  
հաց էին տուել, էլի էն ահն ու զողը կարող էին անձարու-  
թենէն, կրել—օրը իւրաքանչիւրիս մին մին լսաւ աշ էին տա-  
լիս, եթէ մին քանի օր ևս ու շանար ազատվենէրնիս, մոքեր-  
նումս զրած էինք, միմեանց սպանել և մսէրնին ուտել : Գանի  
քանի հարիւրաւոր մարդիկ բանտի օդի անմաքրութիւնիցը,  
մանաւանդ քաղցածութիւնից յառաջ եկած հիւանդութիւն-  
նէրէ մեռան : Մինչ պյու մինչ այն, Սկեանդար խանի միջնոր-  
դութեամբ զօրականաց միայն թողութիւն հրատարակուե-  
ցաւ, և նոր ի նորոյ պարտաւորեցանք Ալի Մուրատ խանի դը-  
րօշակի, տակը մտնել և խոստանալ այնու հետեւ հաւատար-  
մութեամբ ծառայել նրան :

**Երկու** տարուց աւելի էր երբեմն Ալի Մուրատ խանի և  
երբեմն նրա զօրավարնէրի հրամանի տակին, աստանգական  
կեանքով էս էն քաղաքի, ամրոցի և բերդերի վրայ պատերազ-  
մողնէրի հետն էի զտնվում :

**Երր** Մէհրալի խանի հետը եղած զօրաց մէջը Շուշտար  
—Քամիիշէի, լուր եկաւ թէ Ալի Մուրատն մեծ բանակով,  
Թէ հրանից Ասպահան դնալիս, Ճանապարհին մեռելէ : Ի՞նչ ես  
կարծում, տասն ամիս որ Շուշտար էի մնացած, իսկի էս մի-  
ջոցումը մոքիցս անց էր կացած, թէ մայրս ի՞նչ էր կտակել

ինձ հօրս գերեզմանի համար : Ասա՞ մին որ միտքս եկած, որ գնամ դռնէ հօրս գերեզմանը տեսնեմ : Քաւ լիցի, ընդ-հակառակն օրէրս գինեմոլութեամբ և զեղխութեամբ անց-կացրի : Հարցնես ո՞ր տեղաց էր փողը որ ես կարողանումէի էնայէս շռայլութեամբ մախելը : Դուրս կերթայինք Ճանա-պարհների վրայ կսպասէինք, կարավան կամ վաճառական անց-կենալիս, կյափշտակէինք, շատ անգամէլ յամառվողին կը սպանէինք, ունեցած չունեցածը կրերէինք կիսագնով կվաճա-ռէինք : Ամէն զօրականքն բարկութեան բաժակ էին եղած Պարսկաստանին, ոչ ինչ գրիչ ոչ լեզու չէ կարող նկարագրել էն ժամանակուան Պարսկաստանի վեճակը :

**Շուշտար—Դասփիշի բնակիչները որք յուսահատված էին զօրականաց չարութենէն, հէնց լսան Ալի Մուրատի մահն իսկ և իսկ ոտի վրայ կամողնեցին, սկսեցին էս տեղ էն տեղ, ուր որ գտան զօրականներիցը նախ կողապտել և յետոյ տպա-նել : Փոքր փոքր ժողովրդի յանդգնութիւնը կամ լսւ ևս ա-սած, իրաւոնքը էն քաջարտութիւնը ստայաւ, որ ձեռքէր-նին հասցըին երեւելեացը և զօրավարներին ևս : Մեք զօրա-կանքս պարտաւորեցանք ցըռուած, թափառուած կողոպտուած-գնալ ժօղովիկել Ասպահան, ուր Զահվար խանը Ալի Մուրատից յետոյ գնացել էր զօրքով մտել էր քաղաքը ու տիրապետել և բազմել էր Սաֆավիեքանց գահի վրայ : Ի հարկ է որպէս մեղ ան-զուսպ զօրականացս մեղ համեմատ մին զօրավար կամ թա-գաւոր էր հարկաւոր, նշյանպէս և Զահվար խանին մեզ նման հինաւուրց զօրականէր, վասն որոյ և երկու կողմունքն ա-ռանց աշխատութեան կարողացան շուտով միանալ :**

Ես Զահվար խանը, որ Գեարիմ խանի եղայր Սադղ խա-նի որդին էր, մեծ խոստմունքներով գլխին հաւաքելուց յե-տոյ, ցրուէց էս—էն կողմն հնազանդեցնել ապստամբներին, այսինքն իւրեանց անհնազանդներին : Ընդ հակառակն անհը-նազանդներին բռնել, գլխատել և կամ աչքէրնին հանել : Ես խառն ժամանակումը քանի մի հապար զօրքով ուղարկեց ինձ Թէհրան բերդապահ զօրացն օգնական լինել : Իմ դուրս դա-լու օրէրն էր, որ նըլս Վէիս խանիը որ ամէն զօրավարներիցը

քաջասիրտ և լաւ պատերազմողն էր, եկաւ Ասպահան և հըսնազանդվեցաւ Զահհվար խանին :

Ճանապարհին ամենայն անհնագանդ մեծամեծներին պատճելով, ապատամբ ժողովուրդներին ջարդելով, նոցա ինչքը կայքը յափշտակելով, առանց խնայելոյ իղական և արական ցեղին հասայ թէհրան : Կարծումէինք Ասպահանը Զահվար խանին հնազանդելով և Շըհ Վէիոը Զահվարը խանի դուռը գալով, Պարսկաստունը կհնազտնդուի, կիազազուի : Արդար և երեելի մին ուրիշ հզօր հակառակորդ էլ չէր երեւում մին տեղ և ամենայն մեծամեծաց հրովարտակներ էլ որ զրումէր, ոմանց պարդե խոստանալով, ոմանց պատիժ սպառնալով և սրանք էլ որդէս թէ ընդունումէին, բայց ըստ որում Պարսկաստունը քանի մի տարի էր, օրինաւոր թագաւորի անուն չէր լսած, վասն որոյ և ոչ ոքին չէր կամենում միահեծան տէր ճանաչել : Ուստի մինչ այս մինչ այն, ներքինի աղայ Մաշմադ խանը, Մազանդարանցի երեելի Մամադ Հիւսէյին խառնի որդին էր, և հզօր մահուանից յետը դլիսաւոր և աղգաւուեատ էր Գաջար ցեղին, իւր եղբարց, ազգականց և (էլ) ժողովըդի օգնականութեամբը, մեծ զօրքով եկաւ Ասպահան Զահվար խանի վրայ : Զահվար խանը, իւր անիրաւութեանց և յափշտակութեանց, մանաւանդ զօրքալետաց և զօրաց երկար միջոց ոռչիկ չուալց համար, միամիտ չէր, որ նոքա իւրեանց համար կռուին, վասն որոյ մին զիշեր քանի մի հարիւր ձիւռով փախաւ Շիրազ, և ներքինին տուանց հակառակութեան մտաւ Ասպահան : Հիմի էլ պարտաւորեցանը խոստանալ հաւատարմութեամբ ծառայել ներքինւոյն և նրան մեզ գլուխ և հրամանատու ճանաչել :

Ներքինի Աղայ Մահամադ խանը բաղդասւորադոյն դտաւ միւս իւր ժամանակակից բռնաւորներէն : Սա Պարսկաստանի մին անյայտ անկիւնիցը դուրս գալով, շատ եղբայրներ և ազգականներ և ժողովուրդ (էլ) ունենալով, նոցա փոլ իշխանութիւն պարգևելով, ուզարկեց յրուեց տէրութեան ամենայն կողմանքը, որ գնան խաղաղութիւն և արգարադատութիւն քառողին և իւր զրօշակի տակը ժողովին : Եւ որպէս թէ արգելէց խոսութեամբ, քաղաքաց և գիւղօրէից անպարտ բնակ-

չացը անիրաւութիւն չանել : Ըսդհակառակն, ով ոք ընդդիւմանոյ և չուզէ հնագանդիլ իւր դրօշակին, սաստիկ պատժեն նրան : Ինքն և իւր երեսփոխաննէրն կարծ միջոցումը անհնագանդելոցը սպանութեամբ, ընչեց յափշտակութեամբ, աչք հանելով և ամենայն դառն հնարքներով հնագանդացը բին նրա դրօշակին : Կասես թէ Պարսկաստունը նեղացած, վշտացած և անկարողացած էնքան տարուայ շփոթութիւնից և զրիուած երեւելի մարդկանցից և զօրաւարնէրից և զօրքից, յուսահատութիւնիցը, համաձայնեցաւ միարեւան մտնել մին զաջարի հրամանի տակը և ճանաչել նրան կիսաթագաւոր :

Արագատականը, որ գեռ ևս լաւ չէր ճանաչած նրա հեղինակութիւնը : իւր եղբայր Սուլէյման խանին, Սարդարի վերտառութեամբ ուղարկէց ծանր զօրքով, հնագանդացնել էնտեղըանքի ինքնագլուխ եղողնէրին : Ինձ ևս վիճակեցաւ սրաբանակումը հինդ հարիւր ձիւաւոր լինիլ և գծալ Արագատական : Ես իսր հեծելազօրացս հետը միշտ մին կամ երկու օթեամն յառաջընթաց կլինէի, յետագայ զօրաց համար օթեամնէր, պաշտրանէր պատրաստելոյ համար : Շատ տեղ գիւղացիք լսելով մեր գալուստը, ահու կցրուէին, և մեք էլ պարտաւոր էինք հասնել նրանց բռնութեամբ վերադարձնել իւրեանց տեղերը—ասում եմ բռնութեամբ, կարելի է իմանում ես ակամայ, ոչ շատ անդամ արիւնհեղութիւննէր կը լինէր մինչեւ նրանց կլիրադարցնէինք : Եթէ սկսեմ որդեակ, էն արդարութիւն քարոզող զօրավարի, նրա ստորադրելոց և կամ մեր անիրաւութիւննէրը ստորագրել քեզ շատ օրեր է հարկաւոր գաս, նատիս մօտս լրու մունջ ականջ դնես մազէրդ փշաքաղուելովլսես : Ինչ և իցէ հասանք թավքէզ, ուր քաղաքից դուրս վրանի տակը բանակը իջաւ, որովհետեւ էն երեւելի քաղաքը սկիզբը չէր ուղում ներքինւոյ գերազահիւանութիւնը ճանաչելը :

Սուլէյման խանը, որ պակաս հնարագէտ և խորամանկչէր քան թէ իւր հօրեղբայրը, հրատարակէց թէ ես չեմ եկած մեծամեծաց և հրամանասուաց փոփոխելոյ այլ թէ միայն նրանց հնագանդութեամն գիրը ստանալու վերադառնալ Շա-

հի մօտը : Որքան սպասաւորնէր էր բերած Պարսկաստանէն, ամէնին հեռացրէց իրան զլիսիցը . և Ատրագատականցի Թուրքէրիցը բերաւ հաւաքէց մօտը : Քանի մի օրից յետը էն Թուրք սպասաւորնէրով գնաց հոգեսորականաց այցելութիւն և յետոյ Թավրէզու տիրապետողին և երևելի մարդկանց : Տիշրապետողը տեմնելով նրա զիջանումը, ստիպուած համեցէք արաւ բերաւ իւր տանը իջացրէց : Քանի մի շաբաթ անց կացաւ Սարդարը իւր խոստմանց վրայ մնալով, կրկին յայտնէց թէ պէտք է շրջակայ քաղաքնէրիցը, հնազանդութեան թուղթ ստանայ շուտով ուղարկէ հօրեղբօրը կամ իւր հետը տանէ : Ապա թէ ոչ պարտաւորվումէ ուժով պահանջել :

Սարդարը թարվէզու երևելեացը ժողովելով տիրապետողի տանը, էս մասին խորհուրդ տեսաւ նոցա հետ, և յետոյ վը ձռուեցաւ նշանակէ երեսփոխաննէր ուղարկէ Խօյ, Որմի, Նասիիջւան, Երեան, Թիֆլիզ, Ղարաբաղ, Գեանջայ, Նուխի, Շամանի, Բագու, Դարբանդ, և այլն և այլն, որպէս զի նրանցից պատանդ, զօրք, հարկ և զրաւորական հնազանդութիւն պահանջեն, ապա թէ ոչ կպարտաւորվի պատրաստի թալիվիզու մօտը բանակված զօրքը ուղարկել և անհնազանդին զսպել : Ստիպէց թարվիզու մեծամեծացն, որպէս զի և նոքա ևս յորդորանք զրեն երեսփոխաննէրի հետը էն քաղաքնէրի տիրապետողնէրին : Զմուռանանք յիշել կրկին, որ էս ամենայն քաղաքնէրը տասը քսան տարի էր մին մին ինքնիշխան տիրապետող խան անուամբ ունէին, որք Սաֆավեայ թադաւորնէրի ժամանակը, տարին մին անդամ միայն պարգևնէր կըսկէին Շահէրին Ասպահան, ու իւրեանց տեղը նստած ինքնազլուխ կիշշիէին, վասն որոյ և շատ քիչ Շահէրի հեղինակութիւննէրը կճանաչէին : Եւ հիմի, որ քանի մի տարի էր, Պարսկաստունը օրինաւոր տէր չունէր, նոքա ևս մոռացած էին իւրեանց կամ իւրեանց նախօրդնէրի պարտականութիւննէրը, մանաւանդ էն պէս նորելուկ մի մարդոյ շահ ճանաչելը, լու գիտէր Սարդարը, դժուար էր երեալոյ նրանց երևակայութեան մէջը, թերեւս անկարելի, իւրեան նպատակը նոցա հասկացնել : Վասն որոյ և ջոկէց իւր սառըադրելոց մէջը նոցա, որք արդիւնաւոր կարող էին ընկել իւր ցանկացած նպատակին :

Արդարը նշոնակէց ինձ չորս տիրապետողի մօտը գնալ  
այսինքն Խօյ՝ Հիւսէյին, խան Գիւմբուլի, Նախիջևան՝ Քեալը  
Ալի խան՝ Քեանքեարլուի, Երևան՝ Մամադ խանի և Թիֆլիզ  
Հերակլ Վալիի մօտ։ Մին շաբաթումը հազ եւ կարողացայ  
պաշտօնիս արժանաւոր փառքի ու շքեղութեան պարագայքը  
պատրաստել և ճանապարհ ընկնել։

Հէնց Խօյ քաղաքին երկու փարսախաչտի մօտեցայ, Հիւս  
սէյլին խանը շատ ձիւտորնէրով ընդ յառաջ եկաւ ինձ, և տաւ  
րաւ իւր տանը իջացրուց։ Միւս օրը մեծ պարգևնէր Հնաւ  
զանդութեան գրովը զբէց Թարվէզ։ Ես ևս հինդ օր յարւ  
գանաց ընդունելութեանց յետոյ, գնացի դէպ ի Նախիջևան  
Չորսի, Մայրականի և Գեարդեարի Ճանապարհով։ Երբ Մայր  
ական հասայ, Նախիջևանի խանիցը հիւրընկալ ուղարկուած  
նէրը սպասում էին ին տեղ ինձ։ Սոքա խորհուրդ տեսան,  
Դարա-Շամբի Ճանապարհովը գնալուր ասեցին (Գանըղ փիւ  
զամբարի) Ստէփաննոս Նախավկայի վանքն է, Հայոց ձեռքու-  
մը, արժանի տեսնելոյ, Էն տեղ մին օր կը մնանք, և էն տես  
զաց միւս օրը կերթանք Նախիջևան։ Խակ միւսնէրը, որք հետ  
արս էին եկած, ասեցին էդ Ճանապարհնէրը շատ դժուար  
քարքարու է, թէև Գեարդարու Ճանապարհը մին օր հեռի է  
բայց հանդարտ է։ Ես ևս վերջնոց ասածին նայելով Գեար-  
դարովը գնացինք։

Օր ըստ օրէ որքան փառքս պատիւս աւելանում էր և աս-  
տիճանս բարձրանում մահմետականաց մէջը, այնքան էլ  
խղճնուանքս ինձ նեղացնում էր, երբ նայում էի տեսնում Պար-  
սից բարբարոս գործքէրը ընդդէմ Աստուածային և մարդ-  
կային օրինաց, և իմ ստիպուած նրանց հետեիլը և մասնակից  
լինիլը։ Տարիու կէս էր համարեա, որ քնած և թմրած հո-  
գիս զարթած էր, և փոքր փոքր մոքիս էի բերում քրիստո-  
նէական բարոյականութեամբ մնունդու ծնողաց խրատնէրը,  
և թէ որդի, զաւակ կին, հայր, մայր չունիմ ինչի պէտք է  
ես էսքան անիրաւութիւննէր անեմ ակամայ, և էն էլ ում  
համար, այլակրծն տէրութեան համա՞ր, որոց մասին անվարձ  
պէտք է մնամ էս աշխարհքումը և երկնքումը կամ աշխարհ-  
քիս անհաստատ փառքի համա՞ր, որոց անցողականութեանը

Ա ոչնչութեանը ականատես էի փոքր ժամանակուան մէջին  
էսքան երենից և փառատէր զօրավարաց կամ լու ևս ասած  
շահերի գլուխն եկածներէն : Մեծ խղճահարութիւնս էլ էն  
էր, որ ես ներքուատ ոչ կատարեալ քրիստոնեայ և ոչ կատա-  
րեալ մահմեդական էի, սիրտս, հոգիս մին մարդոյ հետը չեր  
կապվում: որուն խորհուրդո, ցաւս յայտնէի, որպէս զի նրա-  
նով գոն է մին թեթեութիւն ստանար խղճմանքս: Աւելի  
քան զիս կա՞ր աշխարհքումք քամբաղդ մարդ: Կը մտածէի  
առ այժմ համբերեմ, կարելի է մին օր Ճակատագիրս ինձ ձգէ  
Հայտստան, հաւատակիցնէրիս մօտը, էն ժամանակը կկատար-  
վի հոգւոյ ցանկութիւնը, միւս կողմէն ամենայն օր մահն էի  
նկարագրում աչքիս առաջեւը, ըստ որում զօրական, միշտ վը-  
տանդաւոր պատերազմնէրի մէջն էի: Թարվել եղած ժամա-  
նակը մաքիս էր գալիս, յանկարծ ծպաեալ մին օր վերկենամ  
փախչեմ գնամ հայբենիքս, որ հիմի շատ հեռի չէ, ազգա-  
կաննէրիս—որք որպէս լսած էի երեւելի և հարուատ էին—յայտ-  
նեմ թէ եկած եմ միայն քրիստոնէութիւնս կատարելոյ հա-  
մար, թողած եմ փառքս պատիւս մահմեդականաց մէջը, և  
ցանկացած եմ վերադառնալ մայրենի եկեղեցւոյ ծոցը: Միւս  
կողմէն նայուումէի, որ յիսուն վաթուն տարի է՝ պապիս դուռը  
գալը, զարմանք չէ, նրա անունը անդամ մոռացած ընին և  
ես մնամ էն տեղ երերեալ և թափառական, երեսիս էլ չը  
նայեն:

Էսպէս տատանեալ և յուսահատութեան ծովի ալեաց  
մէջը ընկըմած կայի, մինչ նշանակէց Սարդարը ինձ գնալ էն  
տեղբանքը, որոյ շատ ժամանակ է ի վեր հոգւով ցանկանում  
էի տեսնել: Սկիզբը աներեւութաբար շատ շատ ուրախ էի և  
մտքումս հասատ դբի: որ էն տեղբանքը հասածիս պէս,  
ցոյց կտամ Հայ և Հայի արիւնից լինելու ի հարկ է նրանք այ-  
սինքն աղդականնէրս կը զարմանան իմ էս պատուիս և փառ-  
քիս տէր լինելուս վրայ. մինչ էս օրուան օրը էնտեղբանք չը  
կոյ մինը ինձ նման Հայ աղդից: ի հարկ է, մինչեւ Թիֆլել-  
լինչպէս լսած էի ծնողնէրիցս շատ վանքէր, զարդարած ջա-  
հերով, եկեղեցէք լսպաերնէրով և ծրագնէրով Ճանապար-  
հիս վրայ և քաղաքնէրումը տեսնելոց իմ մատճումէի, կը

Յանեմ նոցա մէջը կտեսնեմ հոգեորականնէրը զարդարուած շուրջառնէրով, թաղէրով, երկրպագութիւն կտամ խաչ կհաւնեմ երեսի, ծունը կդնեմ, ջերմեռանդութեամբ աղօթքնէր կանեմ, և այլ էսպիսի երևակայութիւննէրով երազում էի մտքումս : Եւ թէ, եթէ Պարսիկնէրը լսեն, խմանան, զարմացք չէ, որ ինչպէս կրօնամնլին, ուղեն ինձ սպաննել տալ և կամ աստիճանն պատիւս ձեռքից առնելյայնի կասեմ, գուք իմ ծառայութեանս և հաւատարմութեանս նայեցէք: Հաւատիս ներքին համոզմանս հետ ի՞նչ բան ունիք : Յայտնի է, որ վերջին վաստա, որնոր ինձ ու ինձ յառաջէի բերում, հիմի լաւ հասկանումէմ: հիմի' . . . որ հաւատիս անհաստատութենէն էր, որովհետեւ, մինչնայումէի, հինգ հարիւր ձիաւորի զլիաւոր եմ: Քանի քանի անդամ պատերազմնէրի մէջ մտած: Վերաւորվոծ մինչև ի մահ, մտածումէի հազեւ իմ էս աստիճանը ձեռք եմ բերած, և ոյժմ սրանք ի՞նչպէս թողնեմ, և մանաւանդ նոր յանձնարարութիւնը խոստանումէր ինձ աւելի ևս փառաց աէր լինիլը ապադայ կեանքիս ընթացքի մէջը: Եւ էսպէս, որդի, աշխարհքա, էս, խարեւայ աշխարհքս ինձ խաղաղէք էր արեւ իւրեան խարեւայ փառքով, երբեմն միտքս ու երեւակայութիւնս այս, երբեմն այն կողմը շըջմքելով ի՞նչ պէս Մասիս սարի զլսի մթնոլորտը քամու առաջները: Որ քան մօտանումէի Հայաստանին, էնքան կարծիքնէրս այլոյլ վումէին և սիրտս սառչումէր նրանից: Որոյ ապացոյն, էր էն, ինչպէս պատմեցի, երբ Նախազիայ վանքի անունը յիշեցին, մին օրուան ձանապարհի վատութեան և իմ ու գլուխաստիս նեղութեան համար, չշամուճայնեցայ գնալ էն վանքը — որոյ մասին մահմեղականնք, ինքեանք զարմանալով էին խօսառմ — և տեսնել և երկրպագութիւն տալ էն հրաշալի եկեղեցոյ պահապանին, որոյ անուաննը իմ պատէրս, որպէս լսած էի ծնողնէրիցու տռանձին եկեղեցի էին շնորհ թիֆլեղ իւրեանց տանը կից և ընծայած նրան :

**Միայնակեացը** էս տեղ, երբ վերջացրէց խօսելը, գլուխը խոնարհացրէց և տառը ըոսպէաչափ մնաց լուռ ու մօւնջ: Զգացի, որ էլ ախորժանք չունի խօսելոյ, վերկացայ մնաս բարեւ ասի գուրս եկի: Հասայ վանքը ուր ինձ սպասումէին

Ճաշելոյ : Պաք օր էր և զանազան խոռեղբնից պատրաստած կերակուրնէրէն կերանք, գնացի մասյ խուցս նստեցայ մատիտով զրած միայնակեցի պատմածնէրը օրինակել :

Ամսայս 26 ին, օրիցը մին ժամ անցած կլինէր զիմեցի դէսլ ի քարանշաւը : Միայնակեցին դտի քարանշաւէն գուրաը մին քարափի ստուերի տակին նստած, որպէս թէ ինձ էր սպասում : Բարեւ տալուս և ողջոյն առնելուցս յետոյ, նստեցայ : Միայնակեացը ժպտալով վերառաւ, երեկուան ընծայքդ մոռացաք տանելոյ, այսօր եկած ես տանելու : Ոչ հայր, պատասխանեցի, չէի մոռացած, այլ գիտութեամբ թողի և գնացի, նրանք քեզ ու հատած էի, թէ չընդունես, դէն ածա՛, կտրտէ՛, միանգամայն ասած, էնդունք տանողը չեմ : Ես ասելիս, հանեցի ծոցիցս քանի մի թերթ զրածնէրս : Հէնց էնդունք տեսաւ, մին փախեցած մարդու կերպարանքով ասեց, հը, էտունք ի՞նչ է, փոքր փոքր ե՞ս ուղում ինձ համոզել—բանէր լնդունելոյ համաձայնացնել :

Ո՛չ ոչ, պատասխանեցի, Ճշմարիտն ասեմ, քոյ ինձ պատմածնէրը զրած եմ, և չիմի բերած եմ որպէս զի մօտդ կարգամ, ու տեսնես չեմ սխալված արդեօք, և խնդրեմ լսես, որ տեղ զանազանութիւննէր կոյ, ասես ամէնն ուղղեմ :

Միայնակեացը էստուր վրայ խօժու աչքերով նայեցաւ, վերառաւ, ի՞նչ . . . ի՞նչ . գրելը ի՞նչ ասելու է, ի՞նչ օգուտ ունիս էդ անցքէն, որ զրումես և նպատակդ ի՞նչ է :

Հաւատացիր հայր, ասեցի երեկն, որ ոչ ինչ, օգուտ բաղել չեմ զրած մաքում, և գիտեմ գիտեմ ինչ է քոյ ասութիւնը, չկարծես թէ իմ զրելոյս նպատակն է քեզ զովեմ և կամ թէ քոյ անունը սրբացնեմ . . . քաւ լիցի . . . ասենք կամենամ, միթէ ինձանովէ էդ—իմ նպատակն էն է, որ պատմութիւննէրը և ազդային անցքէրը, որ դու ես պատմում, ինչպէս ականատես, թաղուած չմնան յաւիտենական մոռացութեան մէջը : Եթէ չես հաւատում ինձ, փոքր ինչ համբերէ կարդամ, լու տես, Ճշմարիտ չլու ասածս արդեօք, յետոյ սեղացիր :

Փոքր ինչ մեղմացաւ միայնակեացը, և բոպէտաշափ լուութենից յետոյ, ասեց, զէ սկսէ կարդու տեսնենք :

Ես շարունակեցի կարգալը : Շատ տեղբանք, որ ես սխալած էի և կամ զանցառութեամբ անցկացած, նա կրկնեց պատմելը և ես ուղղեցի : Երբ վերջացաւ, ննդրեցի ասել իւր կարծիքը հիմի թէ ինչ մոօք է գրած : Նկատեցի քանի մի բոպէ ոչինչ պատասխան չտուեց ինձ, ես ևս խնդրեցի շարունակել երեկուանից մնացածը :

**Ա**յսիս է, վերառաւ միայնակեացը, երեկուան պատմածս, թողինք Մայրական գեղումը կարծեմ:

**Հ**րամերես, ին տեղ մնացինք, պատասխանեցի :

**Ե**՞՛չ, սկսեց միայնակեացը — Մայրականիցը զուրս եկանք մօտերեք հարիւր ձիաւորով և որքան գնումէինք, էնքան շրջակայգիւղերեցը շատանում էին նրանք : Երրորդ օրը հասանք Արագի ափը, ուստից երեսում էր գետի միւս կողմումը, մին գիւղի կամար էր պատրաստած, զարդարած ճոթեղինօք : Հէնց մըտայ նաւակը քանի մի երեւելեօք, որք եկած էին նախիջեանու ինձ ընդ ընդ յառաջ նաւասաց խօսակցութենէն իմացայ որ սոքա Հայք են : Շատ զարմանալով, չկարողացայ համբերել, հարցրի-իբր թէ չեմ հասկանում նոցա խօսքը և կամ չեմ ճանաչում նոցա կերպարտանքէն ինչ ազգէն լինելը — սրանի ինչ ազգից են և ինչ լեզուաւ են խօսում : Մինը որ մօտն կանգնած էր, Հայք են պատասխանէց : Միթէ, կրկնեցի, մահմեդականք չկան էս աեղ, որ էս երեւելի և հարկաւոր ծառայութիւնը յանձնուած է Հայոց : Ըստ որումն վերտպատասխանէց նա, էս մօտիկներումն մահմեդականաց զիւղէր չկան, և թէ, իսկզեանէ անտի տեսուած է նաւակը Հայոց ձեռքին, և իւրեանք էլ տեղեակ են էս արհեստին, մահմեդական բերելը նոր ինորոյ սովորցնելոյ գժուար է : Ի՞նչ գիւղացիք են, ընդմիջեցի ես : Զուղայեցիք են, ասէց նա : Ի՞նչ, Զուղայեցի՞, հարցրի, Ասպահանի՞ց են գալիս, ի՞նչ ես ասում : Ո՞չ պատասխանէց նա, էս գեղի անունը Հին-Զուղայ է և Ասպահանունը, Նոր-Զուղայ, Նրանք էլ էս տեղաց են գաղթուած, և աչա էն գերեզմանատունը — մատնով ցոյց տուէց — որ նրանցից է մնացած : Մինչ ես շուռ եկայ ձախ կողմիս անյագ նայիլ — արդարեւ զարմանալի էր նրա ցից ցից գերեզ-

մանաքարէրն և կոթողնէրը — որ թէ յառաջ տեսած լինէի. կարելի է զօրք կարծէի և վախենայի ևս մոնելնաւակը Արազն անցանիլ : Մինչ այս մինչ այն և ահա զգացրին ինձ թէ հասած ենք գետի միւս ափը, ուր չին ջուղէն էր : Ես տեղ քեալը Ալի խանի աւադ որդին մեղ սպասումէր շատ ձիաւորնէրով. որ յարգութեամբ ընդունելով, տարաւ մեղ մեծ վրաննէրի մէջը, որ մեղ համար պատրաստուած էին :

**Ս.**ուռմեմ ասում, լսումէի վրանի տակիցը մինչև կէս գիշեր ձիաւորնէրի աղաղակը, բղաւիլը, Հայէրին ծեծիլը, մինչև անգամ վերաւորելոյ ձէնը, ինչի համար — գարւոյ, խոտի և ուտելեաց համար — լուս գիտէի, որքան մահմեգականաց գիւղումը առնումէին, էս տեղ կրկին են պահանջում։ Կաւ գիտէի ուղղափառ մուսուլմաննէրը, Հայէրի հացը, մորթած միուրիւղը չեն ուտելը վասն որց և պարտուորում էին Հայէրին մին լիտր մաի տեղը, մին ոչխար տալ, նոյնպէս կրկնապատճիկ բրինձը հաւը, ալիւրը, ձուն, իւղը, և կամ թէ նոյցա զինը, իւրեանց ասած զնովը, որ նոյնպէս թանգ էր նասելոյ : Երանի թէ ուրանցով բաւականանային, որոց գինը յայտնի էր ամէնից, կամ թէ գեղէրումը հասարակօրէն ինչ կդտնվի էն ուղէին, ոչ ոչ էնա պիսի ուտելիքնէր էին պահանջում, որք շատ քաղաքնէրում էլ երբեմն հազեւ կը զտնվէին :

**Ի** Հարկ է հիւրընկալնէրս աշխատումէին ամենայն անգամ կարելի և անկարելի հնարք գործ գնել միայն թէ բաւականութիւն տան ինձ և ծառայիցս և վալթ սընտափ ձիաւորիս, և կամ ով որ մօտիկ տեղբանքից աւելացած էին ինձ չետ գալու, որպէս զի գանգաաաը ինձ չհասնի, և էս ոչընչով չէր կարելի ընել և թէ ոչ Հայէրին նեղութիւն տալով : Գանի մի Պարսիկ ծառայից լըրութիւնը էն աստիճաննը հասաւ, որ Հայոց աղմուկը բարձրացաւ և իմ համրերութիւնը հատնելուց յետը, հարցրի, ինչ էս ձայնը և աղաղակը : Ըանն էլ չկարողացան ծածկել : Քեալը Ալի խանի ծառայքը երբ իմ իմանալը հասկացան, և ևս աւելի զօրացրին Հայէրին նեղացնելը, մինչև հիմի խվաւմէին Հայէրի ուսէրուն, զլնէրս նուն, ձեռքէրնուն, այնուհետեւ փալախկայ զործ զրին : Մին էլ տեսնեմ վրանիս առաջին\* քանի մի ալէղարդ Հայ ծերու-

նիք, ահով ու դողով ներկայացան, խան, ինդրեմք ողորմիլ մեզ: աղաղակեցին ու գանդատեցին սպասաւորնէրի ձեռքեցը: Մի՞թէ ես և մօտա նստած բաղմականնէրը չէ ինք իմանում, իրաւունքը Հայոց կողմն է: Բայց . . . բայց (էս տեղ միայնակեցի աշ-քէրը լցուեցաւ արտասունքով) փոխանակ ողորմելի Հայէրին ինսոյելոյ և խոճալոյ և Ճմարառութիւնը պահպանելոյ, դառն երեսօք ու զայրացմամբ գոչեցի, սպասաւորնէր, էս ծերունի Հայէրի երեսին եմ ասում ձեզ, թէ ուղածնէրնիդ սրանք չը տան, առջիս եմ ձեզ իրաւունք, ողջ զիւղը յախշուակել երել վեր ի վայր կործանել: Մտածեցի թէ ես էսպէս սաստիկ չը հրամայեմ սկզբանը որ Նախիջևանու հողն եմ մտած, թոյլ ոմն կկարծեն ինձ, և այսուհետեւ ոչ ոք չի վախել ինձանէր և ինձ յանձնած գործքը չեմ կարող կատարել: Էս մինքաղա-քականութիւն էր Պարսից, եթէ թագաւորի կամ իշխանաւորի կողմից մինը մին նահանդ մտնելիս, նրա բնակիչքը իսկրեանը թոյլ մտրդ գտան, այնուհետեւ նորա խօսքն աղջուութիւն չի ունե-նալ: Տարաբաղդութեամբ առաջի գիւղը՝ Հայոց գիւղ պա-տահեցաւ: Ցես որդի, տես, ինչ տեղ էի զօրութիւնս, իշխա-նութիւնս վործում: Հայոց մէջը, որք ոտնի տակը, մնացած էս խառնը մինթոր ժամանակումը, պարտաւոր էին կատարել անիշ-րաւ, որքան և լինէր, հրամանա: Արդարեւ եթէ ողջ գիւղը երել էի տուել, ողորմելիքը տեղ չունէին ինձանէ գանդատելոյ:

**Միւս** օրը առաւօտեան սուրբ Նախավկայի վանից զըլ-իսաւոր վարդապետնէրէն մինը քանի մի ոչնարով և ողջ ողջ կաքաւնէրով ներկայացաւ ինձ հրաւիրել տանել վանքը տե-սանելոյ համար: Սովորութիւն է եղած նրանց, ամենայն ե-րեւելի անցկացողաց հրաւիրելը: Աս հիմի շատ ցանկացայ գը-նալը, բայց, որովհետեւ Նախիջևան ամենայն պատրաստու-թիւննէրը տեսնուած էր ինձ ընդունելոյ համար, նմանատէս և մարդ էր եկած և լուր բերած. օր և ժամանակ նշանակած, վասն որոյ ներումն խնդրեցի վարդապետէն և խոստացայ, վե-րադառնալիս կատարել նորա խնդիրքը:

Պիտի շարունակորի.

# ԱՂԲԻԿ

## ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵՍՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՅՈՎՍԵՓ ԿԱՐԹՈՒՂԻԿՈՍԻ ՅԻՇՍՏԱԿԱՐԱՆԸ

Նարունակութիւն և վերջ\*

Եւ մինչ եկաք ի տուն աղնիւ Աղայ Յովհաննէսին ի Ճառշել կանդնեալ ի յոտին, որպէս ինքն նմանապէս և այլքն շը նորհակալացն զմէնջ. և յոյժ յարգեալ գովեցին զհամեսա արարողութիւն սուրբ եկեղեցւոյ մերոյ և բազումհարոց և փորձ արարին վասն ուղղափառ գաւանութեանս մերոյ, և մինչ գեռ բազմեալ էին ի վերայ սեղանոյն առ մեղհայեցեալ յոյժհաւանէին դրութիւն պատկերին մերոյ և մանաւանդ աշացս որպէս ինքնանք, նոյնպէս և իշխանուհիքն Մարիա Պաւլովնին և Մարիա Ատելիանովնին կինն Տալիկինի : Աղայ Յովհաննէսն ասաց նոյտ թէ՝ պատկեր սրբազնիս մերոյ նկարին, և ինդրեցին բերել և բերին, և ամենքեան զրօսան ի յերեսս և ի նկարն որ դեռ կիշատ էր և յոյժ հաւանեցան նմանութիւնն : Մեք քննեալ Կուրակին խնդրեալ էաք վասն աեսութեան նորին կայսերական բարձրութեան Պաւլ Պետրովիչին, որ զնա յոյժ սիրէր իսկ Գրաֆն պատասխանեաց թէ ես ասացեալ եմ նման վասն հրամանուց և խնդրեալ է որ յամայս Ֆ. ին գնացես ի աեսութիւն ի ցարսկի սելոյ՝ առ ինքն իջեանեցաք :

Յունիսի Ֆ. օրն հինգ շաբաթ. համբարձումն Տեառն ընդ Աղայ Յովհաննէսին գնացաք ի ցարսկի սելոյ և ի տան Ալէքսանդր Վալամիչ քնիազ Կուրակինին; իջաք ըստ խնդրոյ իւրոյ : Խոկցն ազդ արար կայսերաժառանդ Պաւլ Պետրովիչին և ինդրեաց զմեղ առ ինքն՝ գնացաք ի պալատն աբքունի ել իւրով կենակցաւն Մարիա Յեղրօնինին, և մեք խոնահեալ գըլլուին ետուք իւրեանց, և իւրեանք մեզ և մեք գնացեալ ի

\* Տես ամսագրոյս նախընթաց թուումը .

Համբոյր ձեռաց նոցա վասն պատուոյ կայսերականն յոյժ խո-  
հարհութիւն ցուցին և ինքեանք : Եւ մինչդեռ մեք ոչինչ  
էաք խօսեցեալ Պաւլ Պետրովիչն ասաց մեղ թէ՝ յոյժ ու-  
րախ եմ որ քո հրամանուցն աեսի և ընդ քեղ ծանօթացաց  
զսցին ասաց և մեծ դշխոյն, և մեք զարժանաւոր պատաս-  
խանիս ետուք երանելով ի մէջ տարարախոտ ազդին Հայոց, որ  
արժանի կալոյ առաջի երեսաց առցին . և այլ այսպիսիս էհարց  
զմէնջ երբեմն եկեալ և երբեմն գնալոց խօսեցաւ ի վերայ լեզ-  
ուաց և շնչանց արար ընդ մեղ իր գիտող լեզուաց Ռուս-  
տաց և ծածկով և էհարց Ռուսերէն բառիւ թէ գիտես և  
ինքն ծիծաղելով ասաց թէ ասա նեմնօշկաց և յոյժ հուպ և  
կյեալ էր կանգնեալ ընդ մեղ հրամայեաց և որդին բերել Ա-  
լէքսանդր Պաւլովիչն որ տեսցուք, համբուրեցաք և զնորին  
փափիկասուն ձեռն և օրհնեցաք և ծնօղքն դերեխային անա-  
ցին կուպլումենց արա, այսինքն գլուխ տուր որ և սրար ըստ  
բանի նոցա և մեք գլուխ ետուք և ելաք շաթիր նորին ա-  
ռաջի մեր անկանելով մինչեւ ի տուն քնեալ կուրակենին և  
անդ ճաշեցաք : Զկնի ճաշուն հրամայեալ էր վելիք քնեազն  
շնչեցուցանել զմեղ ի պալատն ամենայն որ և արարին տեսաք  
զարժանիս տեսութեան թէ պէտ ամենայն ապարանն էր գե-  
ղեցիկ և սսկեզօծ, սակայն ընդ մէջ նոցա յոյժ գեղեցիկ էր  
գարսան քարուպարեաց և տունն չինելի որ բոլորն էր չէր-  
նիզու, այսինքն սիճապիկաւ . և մէկ տունն էր գրեթայաւ մէկ  
մէծ և գեղեցիկ երկայն դարպաս և այլ տունք բազումք :  
Եւ եկեղեցին բոլորն նկատեալ միօրինական պատկերօք յոյժ  
գեղեցիկ և ախորժ : Ետուք և սրբազն վեհի արարեալ տօ-  
նախմբութեան տետրակն զոր Ռուսերէն ունէաք շնորհակա-  
լութեամբ ընկալաւ :

**Յունիսի 7** հոգեգալրւստ գնացաք պարոն Մարգարեանց  
հովանոցն և երեկոյին անդ ճաշեցաք զմնթըրին :

**Յունիսի 8** գնացաք առ խոստովանահայրն, որ յոյժ յար-  
դանօք և սիրով ընկալաւ զմեղ որոյ անունէ իւան իւանիչ :

**Յունիսի 9** գնացաք ամառան տունն և պարտէզն որ շուրջ  
զնովաւ և տեսաք զբազում ինչ գեղեցիկ մանաւանդ զարձան  
մարմարոնեայ :

**Յունիսի 9** ընդ պարոն Փիլիպպոսին, Մանուշարեան, գըշնացաք ի նորաշէն եկեղեցին Խաչի զօր սկիզբանէն արարեալ ի 1767 տմբն. հառիւ թէ չորրորդ մասէն մի մասն են շինեալ լոյն և քառանիխւնի ձեռվ և ահաւոր տեսլեամբ, արտաքուստ և ի ներքուստ մամարոնեայ քարիւք և քանդակօք և բարձրաբերձ զանգակատամբ և լուսամտօք : Տեսաք և զբազում. մարմարոնեայ քարինս զորս քանդակէին վասն որոյ տեսաք և զձեւ սորին զօր փայտիւ կերտեալ հնդեքին կոթուզիւ էին ք և զամենայն ձեակերպութիւնն և զտատկերաց նըշկարսն նշանեալ ի նմա անդ էր և պղնձեայ ձուլածու արծիւն մի մեծ խոյացեալ ի վերայ լուսին նշանին օսմանցւոց, և այլ բազում ինչ արժանի տեսութեան :

**Տեսաք և Պետքոս մեծ կայսեր ձուլածու պատկերն պըշղընձեայ հեծեալ ի ձի :** Ներքոյ ոտից ձիոյն վիշտապ մի մեծ պղնձեայ կանգնեալ ի վերայ յոյժ մեծագոյն քարի լեառնասցելոց զոր ի հեռուստ են բերեալ մեքենեայտկան արհեստիւ բազում ծախիւք, որ հիացուցանէ զտեսօղս վասն մեծի աշխագութեան և հնարիցն ճարտարտպետաց նորին շուրջ որոյ կազմեն զերկելեայ պատեւալ որ ի գէպ ժամու բացցեն լիւնել տեսանելի ամենեցւնց :

**Յունիսի 10** գնացաք ընդ պարոն Փիլիպպոսին ի հովանոցն աղայ Յավիշաննիսին և անտար ուր զախճապիկս շինեն այսինքն զէինեղէնս անօթս զանազան տեսաք զբազում ոսէեզօծ անօթս մեծս և զփռքունքս և զերկուսին մեծամեծ կարսասաձև առնօթսն խփնով և ընկնով ի վերայ որոյ պատկերան երկուց կայսերացն Յովհեփին և Ռուստաց Եկատարինէ երկրորդին : Զի Հռովմայեցւոց կայսրն զալոց էր ի բաղաքս և մէկն նմա էին ընծայելոց զեւ յոյժ գեղեցկայարմար շինէին : Ի վերայ որոյ դունդն կայսերական : Եւ աստ մեզ պարոն Փիլիպպոսն մանու ի զլուխ նոյց չալեան մէկ թուման ետ և վասն մեզ ոսկետուպ չայի թաս էառ և իւր սահանովն և դնովն :

**Յունիսի 11** ընդ պարոն Փիլիպպոսին գնացաք միաբառնիւք մերովք. ի կուղկամբնն յորումեն բազում. և ազգի ազգի պատկերք. մարդկանց. անասնոց. զագանաց. թռչնոց. սող-

նոց և այլ այսպիսեաց խեղաթիւր ծբնէլոյ արտաքոյ բնուշմեան սահմանի երկ և եռագլուխ երեխայս յորոց և բազումք են ձեւան կամ բազմամատունք բազմառոն և կամ այլ ինչ անդամ և մասն աւելեալ և կամ պակասեալ։ Են և զանազան ազգ զեռնոց և սողնոց և գաղանաց անլուր ի մէնջ նմանապէս և թռչնոց հզօրագունից զորս արաղալի ապակով պահեն ի ցոյց ըստ ամենայն տեսողաց և ի զարմացումն սքանչելի ստեղծագործութեանն Աստուծոյ անդ է և մոմաշէն կենազանակերպ պատկեր մեծին Պետրոսի կայսերն առաջնոյ նըստեալ ի վերայ աթուոյ զգեցեալ զհանդերձս և զէն անդ են և մեծամեծ գունդք և աշխարհացոյց և գործիք նոյին։ Անդ են և զրեանք բազումք ամենայն ազդաց։ Անդ են և բազմատեսակք հրէշ։ Անդ են և բազումք շէնք փայտեայ, սկրեայ և երկաթեայ, զրեալք, ի զանազան ազդաց և թադաւորաց։ Անդ են և զանազան պատկերք կուոց Սինէացւոց և Զինացւոց։ Անդ են և զանազան հանդերձ զանազան ազդաց և վայրենի մարդկանց հանդերձ կերպարանոք նոյին անդ են և զանազան ծաղկանց բոյսք, փայտք հողքս քաղաքին և այլք այսպիսիս հրաշ։ Այսինքն ցուցանքաւոր մարմինս պէս պէս կենդանեաց որպիսիք ենն կուսկամքն որ է բառ յունական այսինքն տեղի ցուցանքաւոր նիւթոց։

**Յունիսի 20.** գնացաք ի Յակաղէմին և տեսաք անդ զանազան պատկերս նկարեալս մարդկանց անասնոց զազանաց։ սողնոց և թռչնոց և արուարձանս հողեզէնս նշանաւորս աւանց և փիլիտոփայից յորում գոյ վարժարան ընթերցման և համալսարան ամենայն արհեստից պատկերահանութեան քանադակադութեան ժամացուցաշինութեան և այլ ամենից։ յորում գոյ և ատպագրութիւն։ Եւ տեղիք աշակերտացն ընդ ամենայն իւրեանց այսինքն խոհանցօք հացագործութեամբ և այլովք։ Ընծայեցին մեզ **Զ** պատկեր կայսերական և սուրբ Վէմետրին Ռուտովսկու և մեք ընծայողացն ետուք ԳՌ գիան պարոն Յարութիւն Դաւիթթովն էր ընդ մեզ։

**Յունիսի 20.** գնացաք ազնիւ աղայ Յովշաննիսի հովանոցն և հանդիպեցաք վատաբազութեան զի ոտ մեր Ճոմանցաւ և անկաք յանկողին։ Յուլիսի 20-ին հազիւ առողջացեալ

Ելոք և զնացաք առ սրբազան Գարրիել եպիսկոպոսն :

**Յօդոտոսի 26.** Ընդ ազայ Յովհաննիսին զնացաք առ ոպաւծառափայլ քնեաղն . և արձակումն ինդրէցաք զնալ ի վլճակն մեր ետուք և լընդիր մեր վասն Նախիջևանցոցն և խուսացաւ կտուրել :

**Սեպտեմբերի 7.** զնացաք ի Պետրհով և Զանիքով տեսաք զգեղեցիկ շատրուանսն և զանազան զեղեցիկ շնոն և արձանս ամենայն տեսակ քարանց մանաւանդ թէ զեղեցիկ պաշանն Գանբովու ընդ մեղ էին պարոն Յարութիւնն Դաւ իջեանն և Թիֆլէղեցի տէր Վաղարեանց Շաքարօվի որդի պարոն Աշղալն և Պապօյի որդի պարոն Նիկողոսն :

**Սեպտեմբերի 11.** զնացաք առ Պոկալոկու առաջնորդ և սինօթի դահակալ սրբական Մոքէնդի արքեպիսկոպոսն շատ մարդասիրութիւն եցուց և խոստացաւ աղայն և օպահել տալով մեղ մի ջնորդ սիրոյ զփրկիչն մեր և շնորհեաց մեկ լաւ Սաղմոս ռուսերէն պարոն Փիլիպովոսն էր ընդ մեղ :

**Սեպտեմբերի 13.** օրն երեքշաբաթ ելոք Պետրօվըն և բաղում լաղիւն եղեւ ժողովրդեանն մերոյ :

**Սեպտեմբերի 10.** եկաք ի Դէրժօնէ քաղաքն վասն ոչ պատրաստ զոլոյն փոշտին զբանուաք մերձ մանաստրին կռւսաւնաց և մինչ ծանեան եպիսկոպոս զոլն մեր ամենայն կռւսանքն և մոյրատեան եկեալ առ մեղ խնդրեցին և տարան եկեղեցին և ի խուցն իւրեանց եկինք բաշմութիւնք քաղլոքին յոյժ մարգասիրութիւն ցուցեալ առ ին զօրհնութիւն և յոյժ մեծարեցին զմեղ :

**Սեպտեմբերի 20.** եկաք ի Թուէր քաղաքն և ի քարոզեց մերոց զմինն ի նշան սիրոյ առաքեցաք առ Արսէն եպիսկոպոսն նոցին իսկ նաև խնդրեալ էր զմեղ ոչ զնալ մինչև ինքն ի տատարագն ելց և եկն առ մեղ և նասոյց ի կառն իւր և ընդ ինքեան տարաւ ի մանաստրին իւր ի ծաշ ընդ մեղ էւ ին Վաղմուխ պարոն Պիֆլէղեցի պարոն Կային և Աղալօն տէր Վաղարեան եցոյց մեղ բաղում մարդասիրութիւն արժանի յիշատակի և կցեցաւ ընդ մեղ ի սէր ու բում ետուք զլառատովանիմ և հաւտատմքն մեր ռուսերէն հայերէն զըր եղիս լընեալ ու զղափառութեամբ :

**Սեպտեմբերի 22.** Հասաք ի Մօսկով և ի տան աղնիւ աշոյ Յովակիմին իջևանէցաք մերայնոքն ամենեքումք :

Ենարալ մայօս Նիկալօ Ֆէոդորովիլի Դառասովին գնայաք ընդ աղայ Յօվակիմին և ընդ Ներսէս աղային որոյ կինն մեռեալ էր և էր ինքն կլանի մաքրաղբաթին ողբէղնդնետ խոստացաւ մեզ Սաղմասի մէկնիչ դրչոյ 1780 Սեպտեմբերի 30:

Հոդաեմբերի 15 դնացաք ի աեսութիւն Ֆրթմաշալ և նամէսնիկ քնեաղ Գօրկօրուէլ Վասիլի Միխայէլիչին որ կամաք ինոյն օրն ելանել ի Նախիջևան իսկ նա վասն գոլուն ի վայեան օրն տօն ծննդեան Մարիա Ֆէոդորովին ոչ ետ մեղ թոյլ այլ հրաւիրեաց զմեզ ի ձաշ և վասն դօլունի նոյն հրաբարման օրն չօրէշարաթի վասն մեր հատկապէս արծաթթեայ ալ Փիղօվ կերակուր հրամայեաց պատրաստել էին անդ ամենայն հոգ և որականիքն և բոլոր նախարարքն յոյժ պատռուվող թութիւն ցուցին մեզ բոլորքն և սրբալան եպիսկոպոսունքն քնեաղ Գօրկօրովն և քնեաղ Սէպնին Նիկոլ և Գրաւ Պանին և այլք և ի վերայ սեղանուն ի մէջ հրապարակին զմեզ յարգեցին վասն աշորժ տեսութեան և այլ բաղում բանիւ միսիթարեցին :

Հոկտեմբերի 15. ի Մօսկովու ելաք զեսպ ի Նախիջևան և 17-ին Հասանէք ի ԴաւԼ քաղաքն առ աղնիւ աղայ Մինասն ընկալիալ զմեզ ետ Ճ. թուման Շանտպարհին խարջի 22. եկաք ի Կուրսկ քաղաքն նորին արքիմանուրիտ Գաւրէնցին հրաբարեալ տարաւ զմեզ ի վասնքն իւր և ուահեաց զմեզ ի ձաշ բազում սէրս եցոյց թէ ի մէջ եկեղեցւոյն ի ժամ պատարացին և թէ ի տունս իւր ետ ընդ մեղ և շաքար և այլ ինչ կերպիւ ըմպելիս և գրեաց զիր առ Ֆրթմաշալ Գրաֆ Ռում մէնցովն վասն մեր յանձնարարութիւնք և այլ բաղում բանիւ միսիթարեցին :

Հոկտեմբեր 23 մասք ի Խարբով քաղաքն, և ի վաղուց հետէ ցանկայաք տեսանել զՖրթմաշալ Գրաֆ Պետր Աղէքսանդրիչ Ռումենյովն, որ զօրապետն էր ամենայն Ռուսաց զօրացն : Եւ ի մէջ պատերազմին Օմանցուց արար զբաղում յաղթութիւն թէպէս Յունիս և Յուլիս յամսեանն մինչընելու մեք Ռէտրոլք էաք եկեալ էր անդ սակայն մեք յայնիւ պատարազդութեան իմն հանդիպեալ սակա Շումանցնելոյն ու

տից մերոց ի յանկողինս կայտք, որ մինչև ցաւուրս քառաս  
սուն ոչ կարացաք ելանել ի դուրս և կամ կանդնիլ. ի յոտին  
այսմ պատճառաց ոչ կարացաք տեսանել զնա՝ և զկայսրն  
Հռոմայեցուոց որ եկեալն էր յայնժամ ի տեսութիւն Ռուստաց  
երկրիս, ապա՝ եկեալ մեր ի Խարբով քաղաքին. որ նամէօնիկու-  
թիւն նորա էր այսինքն տեղակալութիւն զնացաք ի տեսու-  
թիւն նորին ընկալաւ զմեգ յարգանօք և պատուեաց յատ-  
կագուն պատուօք և ծանոյց մեզ և զիւրն ցանկութիւն առ-  
տեսութիւնն մեր թէ ի բազմաց լուեալ էի զքէն զդովու-  
թիւնս և յղձայի տեսանել զքեզ երկու գուստը ետ մեզ սպա-  
սաւորել ի Ճանապարհս մեր և Ճանապարհի թոշակ. ետ մեզ  
սաղիւ միով ողջ ոչխար բազում կենդանի հաւք բաղք և օր-  
տակք և մորահաւք և չորացեալ ապուխտ միոք ։ Ըմպելիք և  
հաց և այլ բազում ինչ յիրաւի որպէս լուեալ էաք նոյնպէս  
և տեսաք :

Եսյեմբերի Զ եկաք ի հողն Նախիջեանայ և մտաք ի  
զիւղն որ կոչէ Նէսվիտայ ընդ յառաջ ելին մեզ բոլոր գիւ-  
ղացիքն լալով և կոծով անկանէին տռաջի մեր և ճիչս բար-  
ձեալ աղաղակաւ պատմէին զգէտս տառապանաց և աղքա-  
տութեան իւրեանց որ և մորմոքէին զաղիս մեր ։ Անտի ե-  
կաք ի միտս գիւղն որ կոչէ նմանապէս և նոքա զնոյնս առ-  
նէին անտի եկաք ի հովանոցն Խարտիրոս աղայի որ 10 մէր-  
սիւ հեռի էր ի քաղաքէն Նախիջեանայ, որոյ շինուածքն ա-  
ռեալ էր և քանի տամբ անդ բնակէր վասն ոչ գոլոյն տուն  
պատրարտ և բաւական ի քաղաքոջն ։ Մնաց անդ մինչև ցամ-  
սոյս Յ վասն պատրաստելոյն զհոգեոր հանդէմն և յաւուրն  
չորրորդի պատկեր աւուրն չորեցարաթին և օրն յոյժ գե-  
ղեցիկ և լուսաւոր ։ Ելեալ անտի յեղք քաղաքին վրան էր  
պատրաստեալ և ամենայն հողեորական զարդիւքն անդ պատ-  
րաստեալ եկին ամենայն մեծամեծքն Ռուստաց և մեր բոլոր  
ժողովուրքն և կամենդաթն Սիմէօն Գրիգորիչ Գուրիովն ըզ  
զեստաւորեցաք անդ բոլոր քահանայիւք ամպ հովանիւ և  
ամենայն հողեոր պատրաստութեամբ մտաք ի բերթն և անդ  
թմափօրիւ ելեալ և անտի ի փոքր եկեղեցին բերթի մտաք ա-  
մենայն բազմութեամբն և յետ վճարման երշոյն եքաք ըլ-

նարան զըանն Քրիստոսի թէ այժմ արտօմութիւն ունիք և արտօմութիւնն ձեր յուրախութիւն է փոխելոց: Անդ էր տեսանել լալիւն գոռիւն և գոչումն ծերոց և տղայոց և ամենայն հասակի մորմոքէին վասն ամենայն նեղութեանցն և անկանէին առ ոտո մեր, միսիթարէաք զամենայնն և հաստատէաք զջոյն նոցին: Եւ առնէաք ի մէջ եկեղեցւոյն զբազում խնդրուածս վասն թագաւորին: Եւ անտի ելեալ գնացաք ի տուն պարոն կամէնդաթին վասն խնդրոց նորա ի Ճաշել զչայն և անտի եւ կաք ի պատրաստեալ բնակութիւնն մեր:

**Դեկտեմբերի 13.** գնացաք ի Զերքէզ գիրման, անդ Դօնյակոյի յենարալ Ալէքսէի Խւանիչ Եալաւովսկին որինքն ևս հրաբաւիրեալ էր և իջաք Հօռօմ Եազօր Վասիլիչ Սերջանովի տունն անդ կապիտան պարոն Յովհաննիսին և Ճաշեցաք ի տան յենարալին յարդելով զմեզ զմանուածոր խնդիրն մեր վասն հարկութեանն Նախիջեանայ յանձն էառ կատարել: և հրաբիրեաց զմեզ գուալիս ի սօրուն իւրեանց, որ յոյժ զարդարեալ էր ոսկով և արծաթով. մարգարատաք և քարեղինօք և ամենայն զգեստիւք:

**Յամի Տեառն 1781 և Յունվարի 6.** մեծաւ հանդիսիւն ի բերթէն Ռուստովու գնացաք ի տօնի գիշն և անդ կատարեցաք զկարգն ջրօրհնեաց:

**Յամի Տեառն 1781 և Յունվարի 13.** ելեալ ի Նախիջեանայ գնացաք ի Կատարինէալաւ առ պարոն գուբեռնաթն Վասիլ Ալէքսէիչ Զերթկովն կարի պատուով ընկալաւ զմեզ: Եւ պէս պէս խնդիրս մեր վասն ժողովրդեանն կատարել խոստացաւ և զանկարելին զրեաց քնեազին և զմեզ հրաբիրեաց ժամ առնել արարաք: Եւ աւուրս 14 պատուեաց զմեզ ամենայն մեծամեծօքն Ռուստաց: Մէկ կապուտ եալուտ մեծատանի շնորհեցաք նմա որ արժէր ի 8:

**Փետրվարի 7.** Կարձաք ի Կարինէալաւու ընկալաք զբազում թուղթս ի Սուրբ աթոռոյն զմահն Սուրբ հօրն իմոյ եւ Տեառն Սիմէօն զերերջանիկ կաթուղիկոսին և ի բարեկենդանին մեծ արտօմութիւն եղեւ մեզ և ամենայն ժողովրդեանն:

**ՅԱՄԱԳՐԵԼԸ 4.** ի Նախիջեան յաւուր սուրբ զատկին եւ կեղեցի մի քայտեղէն շնեալ էաք և օծաք յանուն Սուրբ

Աստուածածնին որով փոքր ինչ մի թարեալք եղեն ժողովուրդը։  
յայսմ ամի կարի երկար և սաստիկ եղեւ ձմեռն վասն որոյ  
մեռան բաղում անասունք եղինք կովք ոչխարք և ձիք և  
բազումք ի մերայնոցն հասին յետին յաղքատութեան և աշ-  
նան ցանքն իսպառ ոչընչացաւ ի ցրոցն։

**Յապրիլի 31.** ի տօնի կայսերական մեծութեանն Աստու-  
ածային պատարագ մատուցաք ի Սուրբ Աստուածածին եւ  
կեղեցոջն բաշխեցաք զսրբալցս մեռանն բազում օրհնութեամբ  
և օծաք զըռեսին քարինս հիմանց Նախիջևանայ քաղաքի  
յանուն չորից սրբոց աւետարանն չայցն և ամենայն զղեսառոք  
ելեալ ի յեկեղեցւոյն կատարեցաք զաօն թաղաւորին և ըն-  
թերցաք զինուտակ լուսաւորեալ հողի սուրբ հայրապետին Սի-  
մեօնի Տեառն իմոյ և ծննդի որ զրեալ ի շնորհաւորութիւն  
քաղաքիս և ամենայն բազմութեամբ շնջապատեալ զքաղաք  
քաւս խաչիւք և աւետարանոք և սրբոց մասամբ յորդաբուխ  
արտաս օք և բերկրալից յնձութեամբ օրհնեցաք զըռս կողմն  
քաղաքիս և եգաք զհիմունս սորին ի չորս կողմն քաղաքիս  
այսորիկ որ եղեւ ամենայն սրտից մի թարութիւն և յնձու-  
թիւն։

**Մայիսի 1.** ժամ արարաք օծաք զերկու եկեղեցւոյ քա-  
րինս հիմանց սուրբ համբարձմանն ։ Եւ սուրբ Նիկողոսին և  
մեծափառ հանդիսիւ և ժողովրդովք մերժվք և Ռուսաց տա-  
րեալ ի յԱստուածածին եկեղեցւոյն եգաք ի նշանեալ տեղիսն  
սրբոյն Նիկողոսի ։ Եւ ի Մայիսի 7 նոյն հանդիսիւն եգաք  
զհիմունս սուրբ Համբարձում եկեղեցւոյն։

Ի սոյն թուոջս և ի Յունվարի 6 մեր մեծափառ մաւան  
ի քաղաքս Նախիջևան ի Պետրովք և ի Մոսկով կազէթ էին  
արարեալ։

**Յամի Տեառն 1780 Դեկտեմբերի 2.** վասն մերց ոռջի-  
կին կայսերական մեծութեան հրամանաւն քնիւազն ձևոք եր  
եղեալ տալ մեզ վացուն թուման յամենայն ամի ։

**Յամի Տեառն 1787 և ի Մայիսի 9.** ի վեց յերորդ կեւրա-  
կէին հասապահեցաք զհողեոր դասարան և զսահմանեալ կա-  
նոնս մեր ի սուրբ գրոց ընթերցաք ի սուրբ Աստուածածին  
եկեղեցւոջն ի յունկս ամենից ի քահանայից դատաւորաց իշ-

խանաց և ամենայն հաստրակաց որք և ընկալան խնդութեամբ և ի ձայն ցնծութեամբ փառաւորեցին զԱստուած և զուրբ աթոռն Կջմիածին : Եւ կարդեցաք դատաւորք զՄիմէօն վարդապետն և զտէր զաղարն ինմին աւուր եղեւ բաղադրական ի մէջ եկեղեցւոցն :

Ի Մայիսի 23, ելաք ի Նախիջևանաց և եկաք ի Կատարինէսլաւ ժողովրդեանն եղեւ բաղում լալիւն և գոչումն : Եւ ի Կատարինէսլաւ ի Յունիսի 6, երրորդ կիւրակէին զինի հոգւ ոյ գալստեանն արկուք զՀիմն առւրդ Աստուածածին եկեղեցւոյն մեծաւ ցնծութեամբ և փառօք և ի նմին տեղւոջ տրամաք զվրան և մատուցաք զպատարակ և ձեռնազբեցաք ըզ Մարտիրոսն քահանաց, դուբէունաթն Ալէքսէիչ զուրբեանաթն և ամենայն մեծամեծքն Ռուսաց և Արք ենարար մայեու Նիկոլ Ալէքսէիչն որոյ սէրն յրայ կցեցաւ ընդ մեզ մինչ զի լալով բաժանեցաւ որոյ և որդին էր մայեու անունն մի քան զմի լաւ զրաֆք :

Յունիսի 12, ելեալ ի Կատարինէսլաւու դէպ ի Մօսկով և ի Ճանուարհին հանդիպեցաք ի Բոլթաւ քաղաքն առ արքեպիսկոպոսն Նիկիդորի որ էր առաջնորդ Խերաօնու և նոր Ռուսատաց ի ջառք ի Վանան պահեաց զմեղ երկու օր և եցոյց բանվագիսի մարդասիրութիւնս և անտի գնացաք առ Գրաֆ Պետր Ալէքսանդր Ռուսանցամի Ֆրթմաշան ի զիւղն իւր Վենչեկաց որում եղեւ յուրախութիւն յոյժ իջոյց զմեղ վրանի զեղեց կադունի զըք ի յօսմանցոյն էր գերեալ պահեաց զմեղ չորս օր և յամենայն աւուր առաւօտ և երեկոյի առ մեզ զայր և զմեղ առեալ տանէր առ ինքն ի Ճաշել : Եւ շընեցոյց զմեղ յայմենայն ուրեք մեծադոյն պատուով : Զդովեստն մեր եղիսակութանուն ետիս և հաւանեցաւ : Եւ յետ բաղում մարդասիրական պատույն կամեցաւ առաքել զմեղ ի Քիով քաղաքն յուրաւմեն բաղում վանօրայք և տեղեք սըռոց որք են հիմն հաւատոյ Ռուսաց բալոր երկրին զի նախապէս անտի են հաւատայեալ ի Քրիստոս Փրկիչն մեր և մեք ըստ բանի նորա յանձն առաք զնալ և տեսանել զսուրբ Ապորսն զրեաց զիր յանձնաւ բարական առ որբազան Դարբիէլ մետրապօլիսն Տեղունի տո արքիմանտորիտն Զուիմէ և առ կամենդաթն Կվան Ստեփա-

նիւ Չուկիսովն ընկալնուլ զմեզ և պատիւ ցուցանել :

Յունիսի 24. օրն հինգշաբաթ մտաք ի Քիռվ իջաք ի տան վերոյ կամէնդաթին մերձ ի Պէչէրսկ վանքն յորում արքիմանտրիտն զԱսիմէ նստէր ի մացեալ սոյնոյ արքիմանտրիտ խոկոյն եկն առ մեզ ի տեսութիւն քանի արեղայիւք և զմեզ առեալ տարաւ առ ինքն ի վանքն Պէչէրսկի սուրբ Աստաւածածին կոչեցեալ և շրջեցոյ ի յեկեղեցին և ի զգեստատունն : Եկեղեցիքն էին յոյժ գեղեցիկք բոլոր նկարեալ պատկերօք տը նօրինականօք ի ներքին յորմէ սկսեալ մինչեւ ցմիջակէտ կաթուղեկէին, ոսկէտուու խաչկալեւք և արծաթեայ սեղանօք և սեղանն զարդարեալ մեծամեծ ոսկեայ և արծաթեայ խաչեւք և պատկերօք : Եւ ի նմին եկեղեցուն գոյր բազում անօթ ոսկեղէն սկիհք քանդակագործ մարդարտեայ և ականակուռ սաւզավարդք խաչեւք : Պնակէք և խաչք պարանոցի բազում բոլորն ոսկելի և ականակուռ : Շուրջառք գեղեցիկք և մարդարտեալք ելուղեալք պատուականօք : Յետ տեսութեան զգեստուցն տարան զմեզ ի Պէչէրսկի, այսինքն ի ներքոյ գետնոյ շինեցեալ երկար շէնան որ է ի ներքոյ վանիցն յորում են ամենայն սուրբքն ի բեանց և նախնի հարքն և ի Քրիստոս ծընովքն ի մէջ դադաղի եղեալ առողջ իւրեանց հանդերձիւքն և զգեստիւք թէ եպիսկոպոս, թէ վարդապետ և թէ այլ աստիճանաւոր թուով մինչ 66, որք առողջք են և անապական և զարմանալի տեսողաց : Ինմին գետնափորի գոն և երեք եկեղեցիք, որք զԱստուածայինն մատուցանեն պատարագ : Եւ անահի ի տպագրատունն տարան և յայլ ուրեք : Եկեղեցեաց շէնքն և մանաւանդ մուտն վանիցն էր գեղեցիկ : Ընդ որբազան Արքիմանտրիտին Զոսիմէի և ընդ հասարակ միաբանիցն բալշեցաք և ի սեղան ի ճաշել հասարակութեամբ յետ սաղմառ սելոյն զմեզ հրաւիրեցին ի յօրհնել սկիզբն և վերջն և մի ոմն ի յամրիտոնի ընթեռոյր զՃառ ինչ : Արծաթեայ գեղեցկաշէն և յոյժ մեծ ըմպանակ ինչ գոյր ի մէջ սեղանոյն լի ջրով, յետ հացին ամենեքեան մասնաւորեցան ի նմանէ : Եւ ի մէջ եկեղեցւոջն ի վերոյ սեղանոյն աթոռ գեկին միշտ որ ի ժամ նստման նստցուք : Բազմազիմի ցուցեալ մեզ զմարդասիրութիւն երանելի արքիմանտրիտն չորս անդամ ընդ նմա

Ճաշեցաք և շնորհեաց մեզ զբուսերէն բազում՝ գրեանս և  
զըազում թոշակս ճանապարհի ուտելեաց և լմպելեաց և  
հանապազօք վեց ձիօք կառեթն ի դուռն մեր կայր ընդ ու-  
րումն երամանալս այսինքն կրօնաւոր քահանայի, որոյ անունն  
կոչեւը Ախօրղի կամ Ախօրկի, զոր մեզ վերակացու էին կար-  
գեալ: Երկու անգամ և սրբազան Գարբիէլ մետրապօլիսն  
հրաւիրեաց ի Ճաշ ի վանս սրբոյն Սօգիսնայի և նա բազմա-  
գիմի պատիւս և սէրս եցոյց մեզ և մանամանդ առ սուրբ  
հաւան մեր որ զդանձարանն ունելով ի ձեռին, գովէր  
ի մէջ հրապարակին: յորումէին հոգեօրականքն և երևելի  
աշխարհանանք թէ Ճշմարիտ և ուղղափառ հաւատ է Հայոց  
հաւատն և այլ այնպիսի բանս համարձակօրէն և սա ընկալ-  
եալ զմեզ ի սեղանն սուրբ և յետ արձակման սուրբ պատա-  
րագին, վնշնարա տային մեզ և զգինի: Եւ յելանելն մեր ի  
յեկեղեցոյն խառնիձաղանձ ամբոխն անկեալ ի վերայ մեր:  
ամենեքեան աջ առեալ զօրհնութիւն խնդրէին: Օր մի ևս  
առ կամէնդաթթն Ճաշեցաք: եղաք մեք անդ աւուրս եօթն:  
Եւ շրջեցաք ընդ նմա: ամենայն վանօրայն ի բարաթսկի մա-  
նաստէրն յորումէր դպրոցն մեծաշէն որոյ Արքիմանդրիտ  
և վարժապետ էր ի Պէտրովսկի մանաստերին, յորումէր կա-  
ռավարիչ Քրօնեան իգումենն ի Միխայէլովսկի մանաստիրն յո-  
րում գոյր սուրբ Վառվարեայ կուսի բոլոր մարմինն ի միջա-  
գետին ի մէջ գագաղի եղեալ և ի վերայ նորայ ոսկետուփ խու-  
րան կանգնեալ չորիւք սեամբ, զօրոյ ձեռանէն խաչալուայ ա-  
րարաք մեք մերով ձեռամբ: և քսեցաք ի յաչս մեր և ամե-  
նայն բազմութեանն որ անդ որոյ արքիմանտրիտ է Տալա-  
սեայ: ի Վագուպովսկի մանաստիրն, որոյ գրութիւնն է յոյժ  
գեղեցիկ ի վերայ նորոյ Արքիմանտրիտն նորին Մելքիսէթ որ  
տեղապահ էր մետրապօլիտին: Նիկոլսկի մանաստիրն և կանանց  
երկու անապատն և յայլ ուրեք: Յունիսի 50 ելաք անահի  
կամէնդաթի նաւակն պօստի կայր ի վերայ գետոյն մեծի ընդ  
մեզ ուղղեօրել եկին մեր վերակացու Եղօրի և գումէն պլաց-  
մայեօս իւան Ֆետօրիէն և Յունաց Նիկոլիմոս արքեպիսկո-  
պոսն, որ բնակեր ի Վագուպովսկի մանաստիրն որում շնորհե-  
ցաք արձաթաղլուի զօնար զօտի և Ու էրսկու Ախորեղ եպիս-

կուպոնն որ բնակէր ի Միլսայէլովսկի մանաստիրն շնորհեաց  
մեղ մեկ ջուխտ սրմայակար թեանոց ժամարարի : Սօ-  
փիայի քարոզչի անունն է Սամիսոն : Եւ Պէչէրծկու տպա-  
գրատան վերակացուի անունն է Ֆէօդան և Պէչէրծկի նա-  
մանիկի անունն է Մքիովու գարձեալ գնացաք առ Գրաֆ Ռումա-  
նովս և զնորհակալութիւնս մեր մատուցաք նմա և անտի  
դարձաք ի Մօսկով Յուլիսի 12 :

**Թիւն 1781 և Սեպտեմբերի 9.** պատրաստեալ ամենայն  
զարդիւքն ի Մօսկով կառուցեալ եկեղեցւոյն մերոյ՝ ի մերոց  
ազնուականացն Եղիաղար Ազնիւ աղային և օքչնեալ զաւա-  
կաց իւրոց գերազնիւ Աղայ Յովհանիսին, Ազնիւ Աղայ Մի-  
նաս և Ազնիւ Աղայ Յովհակիմին, որոյ և Հոգաբարձութեամբն  
եղեւ կառուցեալ : Տպեալ դրով հրատիրեցին զբագում իշխանս :  
և զնամենիկն Մօսկովու քնեազ Վասիլ Միլսայէլիս Դոլգո-  
լուկն քահանայք Ռուստաց, պատրիք Լատինացւոյ, և Փաս-  
տոռք Լոթրանաց, զգեստաւորեալ մեր ի յատեան եկեղեց-  
ւոյն, հանդերձ քահանայիւք կատարեցաք զկարգն և օծաք  
զեկեղեցին, մեծափառ հանդիսիւ ասացաք և քարոզ ի Լեզուս  
մեր, զըր պատրաստեալ ունէաք :

Եւ ի սոյն ամսոյ 11-ին օծաք զաւազանն, նոյն հանդիւ-  
սիւն, և ի սուրբ խաչ կիւրակէն, յանդաստան ելաք շուրջ զե-  
կեղեցեաւն, կատարեալ զամենայն պարտաւորութիւն մեր՝  
կամ եղեւ մեղ թեակէտ գնալ ի Հաշտարիսան, բայց յաղագս  
ողորմելութեան Նախիջեանայ ժողովրդեան, դարձեալ գնացաք  
ի Պետրովոյք առ պայծառափայլ քնեազն, թերեւս անզամի  
վճիռ ընկալցուք բանից նոցին, մտաք ի Պետրովոյք Նոյեբերի  
4 : Գնացաք առ քնեազն և ծանուցաք զամենայն ողորմե-  
լութիւն նոցաւ և զբարեկարգելն մեր զքաղաքն, շնորհակա-  
լեցաւ ի ժաման այնմիկ : Եւ անտի գնացաք՝ առ սրբազնն  
եպիսկոպոսունս, եկին առ մեղ և ի Նախիջեանցւոց արք եր-  
կու, դատաւոր կապիտան պարոն Յովհաննէսն Աբրահամեան,  
որ զարդարողն և վաստակաւորն էր Նախիջեանայ, և ինա-  
մատարն նոցին որբոցն և այրեացն : Եւ դեֆութաթ և պօ-  
ռօչիկ մահաբեսի պարոն կարապետն աէր Ռսկանեան, յաղագս  
քաղաքի հարկաւորութեանցն յանձնարարական զրով Ազովու-

ԱՂԲԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

գուրեառնամթին, և նախախայծ արհեստիւն նախիջեւանու, զոր բերալէին ընդ ինքեանս վասն ընծայից, թալամթին, մօրթի, սրմաբան արհեստ, և զար եաղլուկը ընծացեցին քնիազին, դու հութեամբ ընկալաւ :

Յետ այսորիկ՝ տեսաք թէ՝ յամեցումն լինէր, բանիցն մերոց, և վիճակի մերայ բողոքն օր ըստ օրէ զմեզ տառապեցուցանեն դառնալ, և մանաւանդ՝ յափշտակութիւն Մօղկօկու առւրբ Ատեփաննոս եկեղեցւոյն մերոյ՝ որ չարաձձիկ Գօրկի ոմն կամեցեալէր ռուսանալ, և եկեղեցին զայն ևս դարձուցանել՝ որոյ յաղագաւ եպիկուզոսն Ռուստաց և գուբեռնաթն՝ վճիռէին հատեալ հրամանաւ Սինօթին ընկալնուլ; Իսկ Մօղօկու ժողովուրդեն ոչ էին տուեալ առանց մեզ, և մեզ զիկրսիւրեանց զրեալէին մեզ :

Թիւն 1782. մեք գրեցաք Հաշտարիսանու գուրեռնամթին մինչ ոչ ինչ օգտեցաք ինմանէ, բողոք մեր արկաք առ սըրապազնասուբ Սինօթի գահակալ Պետրպոլքու արքեպիսկոպոս Գաբրիէլն, նաև յուսադրեալ մեզ խօսել ընդ գահակցացն իւրոց, և ընդ պայծառափայլ քնեազնն, և եկեալ յուսադրեալ մեզ և առաքեալ առ քնեազն, քնեազն որպէս հարկն էր զըրեաց սաստ և յանդիմանութիւն, Հաշտարիսանու գուրեռնամթին և եպիսկոպոսին ի բաց թողուլ զեկեղեցին մեր և ինեղել զմեզ, որ ընդդէմէ կայսերական մեծութեան դըթութեանն, զոր առաքեալ ի Մտրախ Յ, ելեալ անտի եկաք ի Մուկով, և զինի երկուց աւուրց, դիմեցաք ի Հաշտարիսան, բազում տառապանօք, յաղագս սաստկութեան ճանապարհան ցըտութեանն և ցիխն, մինչ զի ի զատկին ի յանապատէն տեղիս մնացաք : Եւ յԱպրիլե 4. հազիւ հասաք ի Հաշտարիսան, ընդ յառաջ եկին մեզ ամենայն՝ բազմութիւն քաղաքին և ի տեսութիւն մեզ եկին պարոն գուբեռնաթն ձուկով և սրբազն եպիսկոպոսն Անտօնիէ և այլ մեծամեծքն : Զգեստաւորիւալ յԱստուածածին եկեղեցին, գնացաք ի սուրբ Պետրոս և Պողոս եկեղեցին մեր և անդ կատարեցաք զԱստուածածին պատարազն, և յաւուրն երկրորդի, մատուցաք պայծառափայլ քնեազի օրդն, նախարարին և եպիսկոպոսին որ յաւ

զազս Մօղկօկու եկեղեցւոյն, և նոցա ընկալեալ հրաման գըշեցին առ նոսա և առ մեզ միաւ որութիւն, որ եկեղեցին մը նասէ ի ձեռս մեր : Յետ այսորիկ՝ գոգո իչ Գօրկին և ընկերքն զզացեալ ի յանկատար արարմանց իւրեանց, գիր մեղայական գրեցին մեզ, և մեք ընկալաք զնոսա ի հաղորդութիւն եկեղեցւոյ :

**Յայսմ թուոջ:** Քանիկել ետուք զկաթուղիկէն սուրբ Պետրոս և Պօղոս եկեղեցւոյն Հաշտարխանու, որ կարի ցած էր, և տղել տեստղաց : Եւ նորապէս Ճարտարապետական արհեստիւ և բարձրաբերձ շինուածովք և 24 լուսամաօք, նորապէս շինել ետուք, և բաւական ծախս արարաք որ այժմ ամենայն տեսողաց է յանկալի, յաղազս յարմար շինութեանն և ներս սային խորհրդաւոր նկարմանցն :

**Ի սոյն թուոջս և ի Սեպտեմբերի 15, մեծափառ հանգիսիւ օծաք,** ի Հաշտարխան կառուցեալ քարաշէն եկեղեցին յանուն սուրբ կուսին կատարինէ, զոր վասն հոգւոց ննջեցելոց իւրոց, շինեալ էր պոլկովնիցայ Դարեջան զուղանովն : Մեծ հանգիսիւ և զզեստաւորեալ գնացաք ամենայն բազմութեամբ ժողովրդեանն ընդ որս էին նախարարքն և ամենայն իշխանքն Ռուստաց :

**Ի սոյն թուոջս, և ի Հոկտեմբերի 23, կսահմանեալ օրիւնագրութիւնս մեր ընթերցաք ի սուրբ Աստուածածին եկեղեցին, և հաստատեցաք զհոգեսր դատարանս, կարգեցաք յաշջորդ և կառավարիչ կատարանին, զբնիկ սպասաւորն իմ Վարդապան արժանապատիւ վարդապեան, և դատաւորք Աստապատի Տէր Յակոբն, Տէր Եղիազարն և օրհնածին որդին իմ զտէր Մինասն : Կարգեցաք գործակալ, և զգերապատիւ պարոն Մըկըրտումն գալստեան Զուղացեցի :**

**Ուրբանութիւնք հիմնեցեալ և օծեցեալ եկեղեցեացն**

**1779. Մայիսի 26, ի Մոսկով հիմնեցի սուրբ Խաչեկեղեցին, զոր Աղայ Եղիազարեանիքն շինէին :**

**1780.** **Փետրվարի 18.** ի Պետրովիք Հիմնեցի զսուրբ Կատարինէ եկեղեցին և օծի զոր Աղայ Յովհաննէսն էր շինեալ :

**1781.** **Ապրիլի 4.** ի Նախիջևան օծի զսուրբ Աստուածածին փայտեաց եկեղեցին :

ի սոյն թուոջ՝ Ապրիլի 21 ի Նախիջևան օծի զհիմունս նոյն Նախիջևան քաղաքին :

ի սոյն թուոջ՝ Մայիսի 1 ի Նախիջևան Հիմնեցի զսուրբ Համբարձում և զսուրբ Նիկոլոս եկեղեցին :

ի սոյն թուոջ՝ Սեպտեմբերի 5 ի Մոսկով օծի զսուրբ Խաչորի եկեղեցին :

**1782.** **Սեպտեմբերի 15.** ի Հաշտարիսան օծի զսուրբ Կատարինէ եկեղեցին Հանգստի զոր Պոլկովնիցայն էր շինեալ :

**1783.** **Ապրիլի 23.** ի Նախիջևան Հիմնեցի զսուրբ Գէռորդ եկեղեցին :

ի սոյն թուոջ՝ Յունիսի 4 ի Նախիջևան Հիմնեցի զսուրբ Թորոս եկեղեցին :

ի սոյն թուոջ՝ Օգոստոսի 27 ի Նախիջևան օծի զսուրբ Համբարձում եկեղեցին :

ի սոյն թուոջ և ի սոյն օր օծի զհիմունս սուրբ Խաչ վանիցն :

ի սոյն թուոջ՝ Սեպտեմբերի 9 ի Նախիջևան օծի զհիմունս սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն :

ի սոյն թուոջ՝ Սեպտեմբերի 10 օծի զսուրբ Նիկոլոս եկեղեցին :

**1784.** **Յունիսի 21.** Հիմնեցի զսուրբ Խաչ վանքն Նախիջևանու :

ի սոյն թուոջ՝ Նոյեմբերի 22 ի Նախիջևան օծի զսուրբ Թորոս եկեղեցին :

**1785.** **Դեկտեմբերի 3.** օծի ի Նախիջևան սուրբ Գէորգ եկեղեցին :

**1786.** **Նոյեմբերի 12.** օծի ի Հաշտարիսան զսուրբ Յառաւթիւն եկեղեցին Հանգստի զոր Շինեալ էր Աղայ Մինասն Գիլանչովնեան :

ի սոյն թուոջ՝ Նոյեմբերի 20 ի Վլուոր օծի զսուրբ Աստուածածին եկեղեցին :

**Ի** սոյն թուոջ՝ նոյեմբերի 24. ի զգլար, օծի զսուրբ կուսաւորիչ եկեղեցին :

**Ի** սոյն թուոջ՝ դեկտեմբերի 17. ի Մօղդօկ, օծի զսուրբ Աստուածածին եկեղեցին :

**1788.** Օգոստոսի 12. ժամը արարաք ի փայտեայ եկեղեցին Նախիջևանու որ յանուն սուրբ Աստուածածին, և ինոյն օր, հիմնեցաք դքարեայ եկեղեցին որ յանուն նորին :

**Ի** սոյն թուոջ՝ օգոստոսի 13. օծաք զսուրբ Կարտպետ եկեղեցին Նեսվիթ գիւղի :

**Ի** սոյն թուոջ՝ նոյեմբերի 10. ի Տօնի Հրեշտակապետացն Պէնդէրու Աղայ Զամաի մէջիթն, զոր քնեազն մեղ էր տուեալ օծաք զնա յանուն սուրբ Լուսաւորչին, թէպէտ յետոյ յետա գառձուցին առ Թուրքան երկու տարի եկեղեցի եղե :

**1791.** Յուլիսի 10. ի Պետրպօլք, հիմնեցաք զսուրբ Յաւրութիւն եկեղեցին, հանգստի զոր Աղայ Յովհաննէսն շինէր վասն մեռեալ անդրանիկ որդւոյն իւրոյ :

**1792.** Յուլիսի 23. օծաք զէիմունս Գրիգորուազոլ նոր քաղաքին Հայոց :

**Ի** սոյն թուոջ՝ նոյեմբերի 24. օծաք զսուրբ Խաչ վանքն զոր Տէր հաստատ պահեսցէ, Ամէն :

**1793.** Մայիսի 4. օրն ըրեքշաբաթի՝ օծաք Անկարբուրզ կառուցեալ հանգստի սուրբ Յարութիւն եկեղեցին, զոր Աղայ Յովհաննէսն շինեալ էր վասն որդւոցն :

**1794.** Հոկտեմբերի 20. օծի Նախիջևանու սուրբ Աստուածածին եկեղեցին, մեծաւ հանդիսիւ զաղամութիւն գյառատ գրել յաղագս գիտութեան Նախիջևանցւոց :

### Պլիսաւոր երազքն աստ յիշատակին :

**Ի** 1792. Ապրիլի 24. օրն շաբաթ ի Տուպասար տեսի յեւրազի Ախքիրմանցի Տէր Յովհաննէսն կոնդակաձև ինդիր մի գրեալ առ թագուհին և յոյժ ծաղկեալ կարի հաւանեցայ, երկու սպիտակ մոմ և ի նմին կոնդակի կախեալ կային որպէս զարդք. իբր թէ էին Մարտիրոսն և Կոսդանսն Աթքիրմանցի :

Ի սոյն թուոջ՝ Նոյեմբերի 21: ի նախիջեան, տեսի յեւրազի. Սէրդէ Լաշկարովն ստացեալ ենարալ մայեօռութիւն և կարմիր կավալէր. որ եկն ի տուն մեր, մէկ կնքեալ ամանաթունելով ի ձեռին. որպէս թէ՝ վասն մեր էր ի թագուհւոյն :

Ի սոյն թուոջ՝ Գեկտեմբերի 3: տեսի յերազի, սարկաւագ ոմն՝ որպէս թէ յերեկոյի ժամուն էր երեր և ետ ի ձեռս իմ. մէկ մատանի ֆիթլարով և մէկ բոլիանթ խաչ. իրը թագուհին էր առաքեալ. առեալ ի ձեռս մինչ գոհութեամբ լայի, արթնացայ. Աստուած ի բարին կատարեսցէ :

ՎԵՐՋ.



ՄՐԱՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

Ե Բ

## ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՆՐԱ ԱՅԱՄՆԱՆ

ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ

**Հայոց գաղթականութիւնը ։ Հայաստանի անբնակ և աւերակ դառնալը :**

Զարմացք և ուշադրութեան արժանի բան : Քանի որ Հայք բազմաստուածեան են ըլնում, իրանց ծննդական երկրին կապուած են մնում : Ոչ ուրիշ երկիր են գաղթում և ոչ էլ իրանց հայրենիքից դուքս են զնում : Ընդհակառակն, Հայաստան իրա մէջ անբաւ ձրէայ, քանանացին, Ասքեսատանցի, Հնդկաստանցի, Չինացի, Սկիւթացի, Եգիպտացի, Սագաստանցի և այլ գաղթականներ է ընդունում : Հայը թէպէտ և վաճառականութեան հէտ է ըլնում, սակայն պինդ է մնում իր հայրենական հողին վրայ : Բայց երբ քրիստոնէութիւնը Հայաստան մըտնում և հաստատուումէ, նրա բնակիչների բարոյական վիճակը կարի զգալի կերպով յեղափոխուումէ : Հայոց աղդին մինչեւ այս ժամանակ ուրիշ մարդկային ցեղերու վրայ ունեցած ատելութիւնը, ինչպէս որ ամէն անքաղաքակիրթ ազգերու բնաւորութիւնն է, աներեցիթ է ըլնում : Հայը հասկանումէ քրիստոնէական եղբայրութեան սկզբունքը ու հեշտութեամբ աշխարհաբնակ է ըլնում : և մոռանալով շուտով իր հայրենի երկիրը աւելի տարագիր ըլելէ սիրում իր հայրենիքից, քան թէ իր երկրում իրան սղաշտապանելը, աշխարհիս բոլը, կողմերն իրան մի բնական հայրենիք է թուում: միայն թէ կարող ըլնի ազատօրէն իր նոր կրօնն ու հաւատքը, դաւանելու կեանքը պահպանել: Քրիստոնէութեան չորրորդ դարու սկզբ

բառն էր մոնել Հայաստան, վաթսուն տարի յետոյ Հայոց դաշ-  
թականութիւնն էլ սկսումէ : Մոդութիւնը, որնոր Հին Պար-  
սից և Հայոց հասարակ կրօնն էր և այս երկու ազգերու ըն-  
կերական և քաղաքական շահերն իրար հետ ամուր կապողն.  
Էլ Հայաստանից վերացել էր : Քրիստոնէութիւնը մոդու-  
թեան տեղը բռնելով այս կապերը խորտակել էր և Հայը Պարս-  
կից հեռացնելով արևելքի Ցունաց էր մօտացրել : Եաւ ան-  
գամ անօգուտ փորձեր արին Պարսից թագաւորները Հա-  
յաստանն իր նախնեաց կրօնին գարձնելու : Վաղարշապատ,  
Արտաշատ, Գուին, Վան, Նախիջևան և ուրիշ բազմամարդ  
քաղաքները, Շապուհ բ. և իրա նախորդները շատ անդամ  
առին չորրորդ դարումը և նրանք հիմնովին քանդելով՝ նը-  
րանց բնակիչների մի մասը կոսորեցին և մի մասն էլ թը-  
ուով 700,000 զերի տարան<sup>2</sup> բագտրիացւոց, Պարթեաց և Ա-  
րեաց աշխարհներումը : Հինգերորդ գարումը, Հայկական թա-  
գաւորութեան կործանելուց մի փոքր յետոյ, Հայաստանի և  
Պարսկաստանի մէջ մի կրօնական պատերազմ բացուեցաւ, որ  
էր մոդութեանն ընդգէմ քրիստոնէութեան և որնոր մի դա-  
րուց աւելի քշեց, մինչև որ Պարսկաստանն էլ մահմետակա-  
նութեան տիրապետութեան տակն ընկաւ : 450-ից մինչեւ 550  
Հայաստան, ոչ թէ միայն իր որդուոցը թանկագին արիւնովը  
ոռոգուեցաւ, այլ նաև իր բնակիչներին մեծ մասը կորցրուց  
որոնք ստիպուեցան գնալ Մազանդարան, Խորասան, Նէյշաբուր  
և Խուժաստան բնակելու :

Հայաստան, այսպէս Պարսից ձեռքով՝ դարտակուելով իր  
բնակիչներից, յանկարծ եօթներորդ դարումը նրանց պէս մի  
ահարկու թշնամոյ պատահեցաւ, այն է մահմետականու-  
թեան, որնոր Արաբիայում ծագեցաւ : Ղեոնդ, որուն պատ-  
մութիւնը հրատարակեցինք, առումէ, երես 8, որ Արաբները  
Գողթան, Նախիջևան, Տարսն և Գուին գաւառները առնելուց

1 Մովսէս Խորենացի պատմութիւն Հայոց զր. Գ. դլ. 12.

2 Մինակ Արտաշատ եւ Վան քաղաքներից, ըստ վկայութիւնն Փաւո-  
տոս Բիրզանդացւոյն զր. Գ. դլ. 13. եւ Թովմաս Արծրունւոյն եր,  
68. 73,000 զերգաստան հն գերի առել, որոնք ամէն մինը և հոգիկ Հայուելով, 458,000 հողի կանէ :

յետոյ, հավաքաւոր գերիներ տարան Արարիա և Ասորիք, դուինը միայն 35,000 գերի է տուել : Բուղա, Արաբացւոց Աշխագորուն Էմիրը 850-ին Հայաստանի մէջ այնքան մարտիրոսաներ արաւ, որ Ներսն Հռովմայեցւոց կայսրութեան մէջ բոլորի իր տէրութեան ժամանակ կարող չէր եղել անել : Դուին, Նախիջեան, Վան, Դարիոնս և ուրիշ շատ քաղաքներ բոլորովին անմարդի և անբնակ դառան, անթիւ և անհամար Հայք տարուեցան Եգիպտոս, Արարիա, Պաղեստին, Ասորիք և Բաշրելստան և այլ տեղուանք :

**Ա.յն** տարագիր եղող Հայերուն բազմութիւնը պարտաւորեցուց Գրիգոր Բ. կաթուղիկոսին, որ Եգիպտոսում Ասորիքում, Պաղեստինում մի մի եպիսկոպոսութիւններ հաստատէ մետասներորդ գարումը, Հայոց հոգեոր դաստիարակութեան համար : Մի հաւատարիմ աւանդութեան նայելով, Եգիպտոսում հաստատուած Հայոց թիւն այն ժամանակումը՝ 30,000-ից անց էր կենում :

**Ա.րևելեան Յոյները** Պարսիկներից և Արաբներից ետ չմնացին ոչինչ բանումը Հայքը բռնադատելու, որ իրանց երկրից դուրս գան : Հայաստանի, Պարսից և Յունաց մէջ բաժանուելուց հետէ, որնոր տեղի ունեցաւ չորրորդ դարու վերջերումը, Յունաց կայսրներն իրանց ձեռիցն եկած ամէն հնարքներն ի դործ դրին, Հայերը Յունաց հայրենեաց հետ բնաւորելու : Կայսրները ազգային լեզուի ուսումն և պարսկահայոց կաթուղիկոսին իր բոլոր ազգին վրայ ունեցած իշխանութիւնը բանեցնելու իրաւունքն էլ արդիեցին<sup>1</sup> : Ուստի Հայ ազգից անհամար բազմութիւն ստիպուեցաւ 452-ից, որ ժամանակ Քաղքեդոնի ժողովն էլ եղաւ, Յունաց կրօնին հետեւիլ սրանց թիւը միշտ աճելով էր գնում մինչև երեքտասաներորդ դար և այս Յունաց հետ միաբանող Հայերն ծանօթեն պատմութեան մէջ Հայ-Հոռոմ անունով : Գրեթէ ամէնքն էլ բուն Յունաց մէջ կորան կոմ աներևան եղան : Նրանց մնացորդներն այսօր, օրոնք շատ քիչուոր են կեսարիա, Ակն, Թոխաթ, Էրզրում և Կոսդանդնուպոլիս կքնակին և բոլորովին նոյն և մի լեզուն, նոյն և մի բարքն ու վարքը, նոյն և մի սովորութիւն-

1 Մավէս Խորանացի, պատմութիւն Հայոց գր. Գ. զլ. Ծ.

ներն ունին բուն Հայոց պէս, միայն յունական կրօնը կդաւանին և Պատրիարքից ունին կախում:

Բիւզանդեան արքունիքը չբաւականալով կրօնի հետ միասին և Հայկական ազգայնութիւնը ջնջելուց, ամէն Հնարքի դործ դրաւ այս ազգը հեռի և օտար երկիրներումը տեղափոխել, օրինակի համար, կոսդանդնուպօլիս, Մագեղոնիա, Եպիրոս և Պուլղարիա և ընդհանրապէս այսօրուայ Թուբքաց Եւրոպիումը:

Չորրորդ դարուց սկսած՝ ամէն անդամ, որ Պարսից կրօնամոլութիւնը խստանումէր քրիստոնեայ Հայոց վրայ և երբ Հայք չէին կարողանութիրանց հարստահարողներին դէմքնել, Յունաց երկիրն էին գաղթում: Այսպիսի աեղափոխութիւնները շատ անդամ կրկնուեցան մինչև Յուստիանոս Բ-ի հայսրութեան ժամանակ: Այս կայսրը թէ իր մայրաքաղաքի աշխատաւակը բնակիչներն աւելացնելու համար, կամ թէ Հսյանտանը անմարդաբնակ անելու համար, Մէլիտինոյ Հայքը մի մասամբ կոսդանդնուպօլիս և մի մոսամբ էլ Թրակիա փոխադրել տուաւ: Մօրիկ, Հայաստանի ապերախտ որդին և արևելեան կայսր, 582-ին ըստ Սէբեռի<sup>1</sup>, Թրակիան Հայ գաղթականներով լքցրուց և որոնցից վաշտեր կաղմեց Տանուքի վրայ Աւարաց գէմպատերազմելու, Կոնսդանդին է, Գոպրոնիմոս երբ ութերորդ դարումը երգործման առաւ, բարձր Հայոց գլխաւոր քաղաքը քանութելուց և կողոպտելուց յետոյնը նրա միջից Հայերն բազմութեամբ հանեց և տարաւ իր կայսրութեան այլեւայլ տեղուանքներում ցրուեց<sup>2</sup>: Հապուհ Ամատունին, Արաբներու տուած նեղութենից զայրացած, մի և նոյն տարի Յունաց երկիրն անցկացաւ իրան հետ միասին՝ 12,000 Հայով մի նոր գաղթական տանեւլով<sup>3</sup>: Վասիլի: մի ուրիշ հայկազն կայսր Յունաց, առաներորդ դարումը անհամար ընտանիք տանել տուաւ: Թրակիա, երկիր գործել տալու և պատերազմ անել տալու ընդգէմ: Պուլղարաց, Ռուսաց և Մաճառաց<sup>4</sup>: Այս գաղթականութիւնը,

<sup>1</sup> Երես 83 եւ 89.

<sup>2</sup> Ղետնդ, Երես 126.

<sup>3</sup> Նոյնը Երես 162.

<sup>4</sup> Ստեփանոս Առաջիկ զբ. Դ. Պ. Ի.

ասաներորդ գարումը, այն աստիճան աւելացել էր. Դրուա-  
սիումը, թեսաղոնիկում և Մազեղոնիում և իրանց ազ-  
դեցութիւննէլ այնքան մեծացել էր Պուրղարիոյ քաղաքական  
դրժքերու մէջ, որ Սամուել Հայ իշխանն, որ Դէրջան<sup>1</sup> գա-  
ւառումն էր ծնել Պուրղարաց թագաւոր ընտրուեցաւ<sup>2</sup> և եր-  
կար ժամանակ այս երկիրները Վասիլ Բ.-ի դէմ պաշտպանեց,  
անշուշտ, այս գաղթականների սերունդներն էին, որոնք այն  
քան նպաստամատոյց եղան Փրեդիրկոս կայսեր և Գերմանացի  
իսակերպուն, երբ 1189-ին Յունաց ձեռից<sup>3</sup> Փիլիպպէ քա-  
ղաքն առին :

**Այս** երկիրներից Հայք Վեհնետիկ, Գենովա, Պիզա, Հռովմ.  
և Մածառստան, Լեհաստան և Ռուսաստան անցկացան : Մի  
աւանդութեամբ, որնոր գուցէ թէ Տշմարիտ ընի, ասուումէ,  
որ Ռուբենեան թագաւորութիւնն ընկնելուց յետոյ, բազմա-  
թիւ Հայք, մինչեւ 30,000-ի չափ ընտանիք Կիպրոս, Հռոդոս  
և Կրետէ կղզիներումն անցկացան և այս տեղերից Խտալիա դը-  
նացին : Յետոյ երբ Խըրըմը Յսմանցւոց ձեռին է անցկենում:  
այն տեղաց դուրս եկածներն իրանց խառնելով աւելանումեն և  
Խտալիոյ վաճառաշահ քաղաքներու մէջ տարածուումեն ի-  
րանց հետ մտցնելով նաև այն տեղ իրանց վաճառականու-  
թիւնն ու ճարտարութիւնը : Այս Հայերն իրանց Խտալիոյ  
առած ծառայութեան փոխարէն, որնոր իրանց գործունէու-  
թեամբն ու վաճառականութեամբը հարստացրին, մի գաղա-  
նական կրօնային բռնակալութեամբ և մի մոլեգին մօլեռան-  
գութեամբ ընդունուեցան, տամանութերորդ գարու վիրջերում  
և ոչ մի ընտանիք անգամ այն տեղ չէր մնացել ամէնքն էլ  
կորել կամ աներեւոյթ էին եղել : Իրանց եկեղեցիները, որոնք  
իրանց բարեպաշտութեան յիշատակարեններն են, Հռովմ, Նա-  
պոլի, Լիվորնո, Վենետիկ, Գենովա Բատուա իրանց եկամանե-  
րով կանգնած մնացած են մինչեւ այսօր և Խտալացի կղերը

1 Հին Քսէրքսէն քաղաքը երզումի մատ :

2 Ստեփանոս Ասողիկ գր. Գ. Պ. Ի. Բ.

3 Նիկէ, Խսահակ, զր. Բ. թիւ 4. Երես 258. Պատմութիւն քրիս-  
տոնէութեան Ֆլէօրի Աբբայի հատ. Դ. Երես 785, 786.

նրանց օրինաւոր տէրերը աներեսյթ անելուց յետոյ, աէր է եղել նրանց «ի փառա Աստուծոյ» :

Տեղիք կայ կարծելու, որ Քրիստոսից յառաջ, Հայք Կասապից ծովուն և Սև ծովուն հիւսիսային եղերքներուն վրայ վաճառատեղիներ ունեցած ընին Տիգրան Բ-ի և մեծին Միհըրդատայ աշխարհակալութիւններից յետոյ : Ստրաբոն<sup>1</sup> իւստումէ Հայոց այս ժամանակներուն արած մեծ առուտուրի մասին Սարմատացւոց և Միհրաքացւոց հետ, որոնք Տանայիս և Ոսպ քաղաքներումն էին բնակում Օրսինների հետ, որոնք Կասապից ծովու հիւսիսային արևելքումը բնակող ազգ էին<sup>2</sup> : Հայք այս ազգերուն Հնդկաստանի և Բաբելաստանի թանկագին աղբանքներ էին վաճառում : Այս առեւտրական յարաբերութիւններն աւելի զարգացում սփացաներբ Քրիստոնէառութիւնը Հայոց քարոզիչներու ձեռքով Աւղանիստան մտաւ և այն տեղաց էլ Հոնաց աշխարհը : Հինգերորդ դարուն սկզբանումը Հայոց և Հոնաց մէջ մի յարձակողական և պաշտպանողական գաշնակցութիւն էլ կար<sup>3</sup> : Յաջորդ գարումը Պարսից թագաւոր Խոսրովու դէմ ապսատմբող Հայք, բագմութեամբ Կովկաս սարերից անցկացան ու գնացին միացան Խառտանի կամ Հոնաց թագաւորի բանակին հետ<sup>4</sup> :

Աղէքսանդր, Ռուսիոյ մեծ գուքսը, որ Քիէվէր կենում Լեհաստանի հետ պատերազմ ունենալով, 1062 թուին Նախոսի Հայքը մի հանոյական նամակով իրա օգնելու է կանչում, նրանց կրօնի, առուտուրի և արհեստի աղատութիւն խոստնալով : Գարամզին Ռուս պատմագրի խօսքին նոյելով, Հայոց թիւը բաւականին մեծ է եղել 1115-ին Քիէվումը, Վրա Հատիմիր Մոնոմախոսի թագաւորութեան ժամանակ : Հայք, բայցի վաճառականութեան և զինուորական արհեսներու հետ զբաղած լինելուց, Ռուսիոյ արքունեաց ամենալաւ բժիշկներն են եղել<sup>5</sup>:

1 ԺԱ. 773.

2 Տիհնգերական աշխարհազրութիւն Մալտիդիսնի, հատ. Ա. եր. 111:

3 Եղիշէ. Մովսէս Խորենացի, պատմութիւն Հայոց դր. Բ. զլ. 26 :

4 Սէրէսս երես 109 :

5 Հատ. Բ. զլ. Ե. երես 217 :

Հայոց եկեղեցականք, 1157 թուին, Ռուսաց՝ մի քանի աշղանդավետների գէմ Քիեվումն արած ժողովքներու մէջ մասնակից են ընում<sup>1</sup>։ Պուղար քաղաքի աւերակներու մէջ գլունուած անթիւ զերեզմանաքարերն, որնոր Պուղարներու հին մոյրտքաղաքն է Խազանից 90 վերտ հեռի. Հայկական արձանագրութիւններով վեցերորդ, իններորդ և երկոտասաններորդ գարերու թուականներն ունին իրանց վրայ, և հաստատում էն. Հայոց շատ հին ժամանակներումը այս պատուցեալ գաւառներումը գտնուելը<sup>2</sup>։ Ոսկեգահ կամ Ոսկեխումը ասուած թաթարար նեծին Հայաստանին տիրելուց յետոյ, այն տեղաց անհամար զտղթականներ դուրս տարան, որոնցմավ Արարայ, որնոր Վոլկայ գետին բերանը քաղաք է, ինչպէս նաև Աժտերխան, Խազան, Նեգենի նոյն գետին վրայ գտնող, քաղաքները շնացրին։ Մամայ Թաթարաց խանը, որ չորեքտասաններորդ գարումը Ռուսիոյ մեծ գուքս Դեմեարին հետ պատերազմեցաւ, իր բանակին մէջ մի քանի դունդ Հայոց<sup>3</sup> զօրք ունէր. Հայ վաճառականները Մոսկուայում և Բէլիկորոսի թաղումն իրանց բնակատեղին ունէին, ուր տեղ մարդարիտ, խնկեղէն, լեղակ, համեմանք և ուրիշ Պարսկաստանի և Հընդկաստանի ապրանքներ էին ծախում և Ռուսաստանից էլ թանկագին մուշտակներ և մետաղներ էին առնում ուրիշ երկիր տանելու համար<sup>4</sup>։

Խըրըմ, զեռ երկոտասաններորդ գարումը գենովացիք չտիրած՝ Հայերով լիքն էր, որոնք շատ հին ժամանակներից հետէ մեծ Հայաստանից և փոքր Ասիայից և Պուղարիայից հետզհետէ եկել էին։ Քէվէ կամ թէոդոսիում միայն 100,000 Հայ կայ եղել թէ որ կարող ենք հաւատալ մի պատմական յիշտակարանի, որնոր նոր Նախիջևանի եկեղեցւոյն մէջ պահուած է։ Սարայի, Աժտերխանի և Խազանի Հայերը, Թաթարներից նեղութիւն կրելով, զէնք առին իրանց ձեռին և երեքտասան-

1 Ցիշաստկաբանաց ժողովածոյ Հայոց պատմոթեան համար, հատուի, երես 283, 284։

2 Նոյնը՝ երես 284, 285։

3 Գարամղին հատ. Ե զւ. Ա. երես 64։

4 Նոյնը՝ հատ. Ժ. զւ. Դ. երես 211։

երորդ գարու վերջերում Խըրըմ անցկացան։ ուրիշ գաղթականներ էլ Սարսահց եկան չորեքտասաներորդ գարու վերջերումը երբ որ Ասկեդահ առուած Թաթարներու պետութիւնը կործանեց Տիմուրլէնկ։ Այս Հայերը Առւտակ, Քէֆէւ, Թաման և Քարասու-պազար Քաղաքներու մէջ հաստատուեցան։ վաճառականութիւնը շուտով սրանց գործունէութեամբ արտաքոյ կարգի յառաջացաւ, Խըրըմ, որ յառաջ սյնքան աղքատ էր հարստանալով՝ Ասիոյ և Եւրոպիոյ ապրանքներու ամբարանոցն եղաւ։ Երկու առաջնորդութիւն հաստատուեցան այն տեղ Հայոց անհամար եկեղեցները կառավարելու համար։ Հայք իրանց առևտրական գործողութեան ըջանն ընդարձակելով, նմանապէս իրանց գաղթականութիւնն էլ տարածեցին, և շուտով Կալլեցիումը, Մաճառստանում, Գրանչսիլվանիում, Մոլում, Վալարիում, Բուգովինում, Լիթուանիում, Բոդուիում և Բանատում Հայերով լքցուեցան։ Զէրնովից, Կամէնէց, Ատանիսլավով, Լէմբէկ, Վարշաւա, Գլուխոր Քաղաքներն եղան Հայոց համար բնակատեղիք։

Երբ Օսմանցիք Խըրըմն առան, Հայոց մի մասը կոտորուեցաւ, ուրիշներն էլ նրանցից փախչելու համար, զնացին իրանց ազգայնոց հետ միանալու Լեհաստանն, ուր տեղ իրանց թիւը մինչեւ 40,000 ըաանիքի հասաւ, ինչպէս ատումէ նոր Նախիջևանումը պահուած ձեռագիր վկայաբանութիւնը։ Լեհաստանի իշխանները, Լեռն Գանիէլովիչ, Գաղեմիր Գ. Ալեգիսմունդ և Վլատիսլաւ Գ. իրանց երկրին մէջ առևտուրն ու արհեստներն յառաջ տանելու համար։ Հայոց կրօնի աղատութիւնն, Քաղաքացիութեան իրաւունք, և իրանց համար առանձին ըստ Հայոց օրէնքին մեծաւոր և գտաւոր ունենալու արտօնութիւնները առ ին։ Հայք գործունեայ վաճառականն, Քաջ պատերազմով և յաջողակ գործակատար լինելով երկու դար և կէս Լեհաստանը, իրանց ընդունած Հայրենիքն երևելի արին, որնոր յառաջ այնքան աղքատ էր։

Տասներորդ գարը վախճան դրաւ Հայոց երջակութեան Յիսուսիանց ձեռքով մի անիրաւ և անխիղճ հալածանք եղաւ։

Պատմութիւն Տարիակոյ Բօկուշ Սիսրապօվախի հատ. Բ. Երես

Հայոց գէմ: Յիսուսեանք իրանց դժոխային բանսարկութեանց շնորհիւն իրը թագաւոր իշխումէին այս երկրին վրայ և Նիքոլ անուն ամբարտաւան և ամբարիշտ մարդուն մէկը սիւմօնականութեան զօրութեամբ իրան Աէմպէրկի եպիսկոպոս կարգել տուաւ: բայց իր հօտն իրան մերժելով, նա գնաց Յիսուսեանց մէջ իրան պաշտպանութիւն գտաւ և մի հալածանք յարուց Ներոնի հալածանքներուն նման Հայոց վրայ երբ նրանք իրանց զբաղմանցը հետ էին խաղաղութեամբ և կեղեցիներն ու ուսումնարանները փակուեցան, եկեղեցականները քշուեցան և Աստուածային պաշտօնն էլ արդիլուեցաւ, ոչ մը կը բռութիւն, ոչ թաղում և ոչ հաղորդութիւն եղաւ 23 տարիի շաբ: Աեհաց հառւավարութիւնը միջամտութիւն առաւ օրինաւոր կերպով այս գործուն մէջ և իր ողորմելի հըպատակներուն իրաւունքը պաշտպանել կամեցաւ, բայց Յիսուսեանք այս ժամանակներումն իրանց զօրութեան կատարն էին հասել: Նիքոլ եկեղեցիներու, հիւանդանոցներու և ուրիշ հիմնարկութեանց և եկամուտներու վրայ բացարձակ տէր եղաւ: Եատ Հայեր պարտաւորեցան թողել այս երկիրներն ու զնալ թուրքերից ապաստանարան փնտուել որոնք շատ աւելի մարդկասէր էին քան թէ այս կարծեցեալ և իրանք իրանց քըրիստոնեայ անուանովները: Սաքսոնիա, Հոլլանդիա, Անգլիա և Բաւիէրա այս գաղթականներից իրանց քաղաքներումն ուսնեցան, նրանցից մնացածներն հաւան իեցան իրանց եկեղեցին ուրանելով Աեհաստան մնալ: Այսօր մի քանի ողորմելի մնացորդներ են երեւում, որոնց թիւը հազեւ 25 կամ 25,000-ի կհասնի: Աեհաստանի բաժան բաժան լինելուց յետոյ, Հայերը Աւստրիայ տէրութեան տակն անցկացան և իրանց հին հարստութիւններն ու արտօնութիւնները կորցրին, մանաւանդ 1848 թուի յեղափոխութենից յետոյ:

Հայոց գաղթականները, որ անդ որ հաստատուեցան Եւրոպիում և Ասիում վաճառականութեամբ և արհեստներու հետ զբաղտծ ըլնելով անգամ՝ ամեննեին անփոյթ չեղան զիտութիւններ էլ մշակելու, որուն ապացոյց է այն անհամար տպարաններն, որ ամէն տեղ հաստատեցին: Վենետիկու Հայերն

առաջինն եղան իրանց մէջ 1565<sup>1</sup> թուին տպարան հաստատողները : Նրանց օրինակին հետևեցան շուառվա ամէն Հայերը ուրիշ եկիրներումը . 1567-ին կոսդանդնուզոլսումը . 1584-ին Հռովմայումը . 1616-ին Լէմբէրկումը , 1624-ին Միլանումը , 1633-ին Փարիզումը , 1640-ին Զուլֆայումը , 1660-ին Ամստերդամումը , 1673-ին Մարսելիումը , 1680-ին Լէյբուրկումը , 1690-ին Բատուայումը , 1719-ին Կալիաթայումը և Մատրասումը . 1770-ին Էջմիածնումը , 1780-ին Ս-Պէտրապուրկումը , 1790-ին Նոր Նախիջևանումը , 1793-ին Աժմերիսանումը : Այս տպարաններու մեջ մասի հիմնարկութիւնը Ոսկան վարդապետին ենք պարտական :

Ֆրանսիում հաստատուած գաղթականներն իրանց տըպարաններովն երկար ժամանակ չմնացին , սրանց կորչելու մասին մի Ճիշտ տեղեկութիւն չունինք : Երեսումէ , որ կամ գուրաքշուեցան . կամ թէ ոչ ստիպուեցան իրանց եկեղեցին ուրանալու , երբ Նանուի Հրովարտակն ետ առնուեցաւ : Մարսելի մի փողոց , որ Հայոց անունովն է կոչուում միմիայն մնացած յիշատակարանն է : Այլևայլ ժամանակներումը քրիստոնեայ . Եւրոպիում հաստատուած բոլոր Հայ գաղթականներից<sup>3</sup> Ռուսաստանցիներն են մրայն . իրանց ազգայնութիւնն ու հաւաքար մինչև մեր օրերը անարատ պահողները : Բայց սակայն էլիշատ նեղութիւններ կրել են Ռուս եկեղեցականաց տգիտութենից և մոլեռանդութենից , որոնք շատ անդամ Հայոց գէմանգթութիւններ և ստիպողական գարձեր անելու փորձեր են արել : Կննովինատիոս<sup>2</sup> Ռուս վարդապետը , մի ժողովքի մասին է խօսում : որնոր եղելէ 1157 թուին Քիէվումը Ռուս եկեղեցականներից , որուն նպատակն է եղել քննել և դատապարտել ասումէ , մի մոլորեալ Մարտիրոս անուն Հայու հաւատքը , որնոր յետոյ այլել են : Անտարակոյս այտիսի պատճառներու պէտք է առաջնաշատ հազարաւոր Հայերու առներեսոյթ լինելը , որոնք երկար ժամանակից հետէ Քիէվ և Նրա շրջակայքումը հաստատուելէին : Ռուսաց տէրութիւնը Պարս

1 Այս տպարանը միսիթարեանցը չէ , որնոր 1715-ին հիմնուեցաւ զըրելիք մէկ ու կէս դար յետոյ հայու ովիմեկան կրօնաւորների ձեռքով :

2 Նախաշաւիր եկեղեցական պատմութեան , Ռաբելն , հատ . Բ . եր , 1881:

կաստանի և Տաճկաստանի Հայոց հետ յառաջուայ ունեցած յարաբերութեանց մէջ բոլորովին տարբեր քաղաքականութիւն բռնեց : Մինչև այն ժամանակ անձնախնդիր և տիրապետական Ռուսաստանը անշուշտ յօդուա իր հարստութեան, վաճառականութեան, ճարտարութեան և իր առագայ աշխարհականութեան Ասիոյ մէջ, տասնուվեցերորդ, տասնուե եօթերորդ և տասնութերորդ դարերումը Հայոց պաշտպանն ու բարեկամն եղաւ : Ռուսաստան մեծ մեծ խոստմունքներ տուաւ, առատ առատ թոշակներ կապեց, արտօնութիւններ շնորհեց, ազնուականութեան, ասպետութեան կարգեր բաշխեց, որպէս զի այս ազգին համակրութիւնն իրան քաշէ :

Սպահանու Հայ վաճառականաց ընկերութիւնը 1659-ին Ալէքսիս Միխայէլովիչ կայսեր անդամանուներով և սուտակներով զարդարուած մի ոսկի աթոռ զբկեց, Հնդկաստանի և Պարսկաստանի խնինիներով անուշեղեններով միատեղ : Այս ընծայն երի վրայ, որուն այն ժամանակ 24,443 ռուպի արժողութիւն են տուել, Ռուսաստանի և այս ընկերութեան մէջ մի առետքական դաշնադրութիւն հաստատրեցաւ :

Այն ժամանակ Հնդկաստանի և Պարսկաստանի թանկագին ամրանքները սկսան Ռուսաստան դաշտարակով խորշակ, Սպահանի և Կասպից ծովու վրայով : Նովկորոտ, Արխանկել և մի փոքր յետոյ էլ Բէտրոսուրինոր Հայ գաղթականներ ունեցան հաստատուած իրանց մէջ : Հայք 1686-ին մի ուրիշ առետքական դաշնադրութիւն արին Շուէտի հետ : 1710-ին Սաբար Վաղելիք Հայազդին առաջին եղաւ թթի ծառը անկողը թէ ընկ գետի ափանցը վրայ և այն տեղ առաջին մանարանը հաստատողը : Մեծն Պետրոս 1711-ին Մարտի 2-ին, Հրովարտակով հրաման տուաւ Տերակուտին՝ բաղադրական Պարսկաստանի Հայերը և նրանց ամէն կարելի եղած օգուաները ցոյց տաշտաստան քաշելու համար մի ուրիշ հրովարտակով էլ 1717-ին Ցունուարի 27-ին տուուած, Պետրոս Ապրօյի անունով մեծ և պատուաւոր վաճառական Զմիւռնիայում Տաճկաստանի Հայոց Ճամբար էր բաց անում դէպի Ռուսաստան : Սի

1 Ցիշատականաց ժողովածոյ Հայոց պատմութեան համար, հատոր Բ. երես 890.

Կլրողդ Ճշմարիտ բան է<sup>1</sup>, որնոր 1718-ին է եղել հաստատում՝ է. որ Հայք են Եղել Ռուսաստանում առաջին մետաքսարանակարը հասատողները և նրանցմով Ռուսաց կերպաս շինել սորվեցնողները :

Այեծին Պետրոսի իմաստուն և նախատես քաղաքականութիւնը Ռուսաստանի երջանկութեան համար անբաւ հետեւանք յառաջ բերաւ : Հազարաւոր Հայեր և հաստանը, Պարսկաստանը և Տաճկանտանը թողարկութիւն և Ռուսաստան գնացին բնակեցան և իրանց վաճառականութեամբ, արհեստներովն ու երկրագործութեամբը ձևացրին : Վափրաս Հայազգին, 1779 ին Կատարինէ Բ-ին մի շողուն անդամանդ ներկայացրեց արտաքոյ կարդի մեծութեամբ և գեղեցկութեամբ, որնոր այսօր կայսերական դաւազանն է զարդարում : Մի ուրիշ անդամանդ նոյնպէս երեելի դնով, Պողոս Ա. կայսեր ներկայացրեց Աբամէլլե Հայազգի իշխանը :

Կատարինէ Բ-ի ժամանակ, 1779-ին 15,000 Հայ Խըլըմից գուրս եկան Դոն գետի վրայ նոր Նախիջեան և Գրիգորուազոլիս քաղաքները հիմնեցին, որոնց մէջ գլխաւորազէս Հայք ին բնակում իրանց առանձին դատաւորովն ու մեծաւորովը : Հայ գաղթականներուն թիւը Ռուսաստանի ուրիշ քաղաքներում օր ըստ օրէ ամեցաւ : Աժտերիսանի Հայքն էին այն ժամանակ մինչեւ 5128, Ղըլլարինը մինչեւ 192, Մողդոկինը մինչեւ 2000 և այլն : Հայք առ հասարակ նաւաշինութեան էին պարապում կասպից ծովու նաւարկութեան համար, մետաքսագործութեան և ֆրանսիական<sup>2</sup> կերպով ողեւ շնելու, այգեղործութեան և թթենի, պտղատու ծառերի բրինձ մշակելու հետ էին և մանաւանդ կովկասեան սարեցւոց հետ մեծ առուտուր էին անում :

Տասնեւիններորդ դարու սկզբիցը Ռուսաստանն այեւայլ ժամանակ Տաճկաստանի և Պարսկաստանի ձեռից, մեծին Հայաստանի մի քանի նահանգները խլեց, ուստի նրանց թիւը 1828—1830 թուին նոր գաղթականներով աւելացան : Պատու

1 Նոյնը հատոր Բ, երես 146—201 :

2 Այսպէս է ցոյց տուած կայսերական հրովարտակումը, Տես Ժողովածոյ, յիշատականաց Հայոց պատմութեան համար հատ, Բ. եր. 90 :

Քեկչ զօրապետը Երվուամից, Կարսից, Պայաղետից և Թուալ-  
բաք քաշէից 90,000 Հայ դուրս հանեց : Խոյից, Սալմաստից,  
Վորմիից, Դաւրիզից և Մաքուից, որոնք Պարսիկ քաղաքներ են  
40,000 : Այս կերպով այսօր Ռուսաստանի Հայոց թիւը 550  
հազարն անցկացաւ, որոնցից 50,000 Կովկասից գէնն են և 500,000  
էլ գէսը Հայաստան, Վրաստան և Շիրւան ցրուած : Ճիշտ չը  
գիտացուիլ Կովկաս սարերու Հայոց թիւը, սակայն 15,000-ից ա-  
ւելի չպէտք է ընթիւ, Հայք այն տեղ անկախ են և Զէրքէզների  
հետ միացած Ռուսաց գէմկպատերազմին :

Այս սարեցի Հայերից 1838-ին Կովկասից դուրս եկան  
800 ընտանիքի չափ և գնացին Ռուսաց պաշտպանութեան  
տակ Գուբանի մօտերը Արմաւիր քաղաքը հիմնեցին :



## ՀԱՅՈՑ ԱՅԺՄԵԱՆ ՎԻՃԱԿԸ

Այս հին և մեծ ազգին մնացորդները, որոնք այնքան  
քաղաքական, ընկերական և բնական աղէտներից յետոյ առա-  
րեցան տասնուուչորս դարու մօտ՝ տակաւին բաւականին գիմաց-  
կուն և զօրաւոր տարերը ունին մի նոր ազդի մարմին առնե-  
լու համար : Այս ազգը արտաքին և ներքին պատերազմնե-  
րու աղէտալի ազդեցութեան տակ մնալով, իր մասաւորական,  
բարոյական և բնական կատարելութիւններից շատ կորցրուց:  
և ամէն աշխարհակալ իր մոլութիւններից մինը նրա ճակատին  
վրայ դրոշմեց : Այսօրուայ և յառաջուայ Հայերուն մէջ անչափ  
մեծ զանազանութիւն կայ : Առհասարակ հին Հայք աւելի հա-  
մարձակ, աւելի քաջասիրու, և աւելի հայրենասէր էր, մինչ-  
դեռ մի երկարատեւ գերութեան մէջ մնալով, այսօրուայ Հայք  
դրեթէ մեծ մասամբ շատ հեղ, անհոգ, անզգայ, զգոյշ վախ-  
լուկ և գէպի եսկականութիւն դիմելու հակամէտ է : Սակայն  
այս ազդը իր նախնեաց մի քանի առաքինութիւնները դեռ ևս  
պահումէ, իր քրիստոնէական կրօնին վրայ, որ շատ հաստատ է,  
միացրած է, մեծ քաղաքներից գուրս, քրիստոնէութեան առաջ-

Ջինժամանակուայ արժանի բարքն ու վարքը : Եւ բոսպոցի ճաշնապարհորդները, նաև նրանք՝ որ իրանց նախապաշտումունքը ներով և իրանց մալեանդութեամբը կատաղի թշնամի հանգիստացելեն այս աղջին գեմի այս կատարելութիւնները<sup>1</sup> չեն մերժել : Հայոց անձնուրացութիւնը, հիւրասիրութիւնը, հաւատարմութիւնը շատ նշանաւոր են եղել :

Այսօր Հայք վեղ տէրութեանց հպատակ են : Տաճկաց, Ռուսաց, Պարաից, Աւստրիացւոց, Անգղեացւոց և Հռլանտացւոց : Տաճկաց տէրութիւնը մեծ Հայաստանի զրեթէ մեծ մասն և ամբողջ փոքր Հայաստանն իր ձեռին ունի 3,100,000 Հայերով : Տաճկաստանի Հայք զինուրական ծառայութենից և քաղաքական պաշտօնավարութենից զըկուած ըլելով բոլորվին երկրագործութեան, վաճառականութեան, արհեստներու հետ են զբաղած<sup>2</sup> . այնպէս, որ Ասիոյ Տաճկաստանի ցաւմաքային զրեթէ ամբողջ առօւտուրն իրանց ձեռքովէ կատարուում : Դրամական ամէն գործքերը բոլորն էլ Հայոց ձեռին է գտնուում : Կառավարութեան գրանանոցի վառօթարանի, երկարագութեան էրկանաների, մեքենաների, ջաղացքի, մետաքսի գործարաններու ամէնքն էլ Հայոց ձեռքով են տնօրինուում : Առլութանի ճարտարապետն է Կարուտիետ Խալֆան, նոյնպէս Հայազգի : Որ հաստրակաց շինութեանց պաշտօնէի պաշտօնն է կատարում : Կողադանդնուածուց ամէնից վարպետ ոսկերիչները, ամիսագործաները, փորագրիչները, որմնաղիբները, քանդակագործները, մեջքնազործները զրեթէ բոլորն էլ Հայք են : Ամենամեծ Հայերից մինն որ Տաճկաստանը տեսաւ, Խաղաղ Յարութիւնն է : Որ գրամանոցին զինաւոր տնօրէնն էր և Առլութան Մահմատին էլ սիրեկանը : Խաղաղ Յարութիւնն առաջ և ուղիղ խելչ քողնուազգած և ողորմած մարդ ըլնելով իր տիրոջը լիուվին վատահութեանն արժանի եղաւ : Իր առատատաձեռնութիւնը ոչ սահման և ոչ խտիր էր Ճանաչում աղջի և կրօնի կողը :

1 Հայր Աէօնիէ, հաճոյական եւ հետաքրքրական նստավիներուումը հատ.

Ա. երես 300—301 եւ 324.

2 Հայք, արեւելեան աղջերի եւ զուցէ թէ բոլոր աշխարհի աղջերի մէջ ամէնից աւելի վաճառական են : Հաճոյական եւ հետաքրքրական նամակներ հատ : Ա. երես 435.

մանեւ, Հայոց Քաթոլիք, Յոյն, Հրէայ, Ասորի, Տաճիկի իրա ողործ  
մածութիւնը և առատաձեռնութիւնը վայելում էին : Իրա  
յատուկ ծախքովը թէ կոսդանդնուազօլսումն ու թէ Տաճիկաս  
աանումը Յունաց և Հայոց շատ եկեղեցիներ էլ շինել տուաւ,  
նմանապէս և շատ ուսումնաբաններ իր ազգայնոցը կը թու-  
թեան համար և որոնց համար և առատ առատ եկամտներ  
կապեց, բացի սրանցից որբոց համար էլ մի հիւանդանոց շի-  
նել տուաւ, Ետիդուլէ (եօթը աշտարակ) ասուած տեղին մօ-  
տերը, գրագէտներին լպաշտպանեց և լպատանեկաց գաստիա-  
րակութեան համար հարկաւոր եղած մի շատ գրքեր հրա-  
տարակել տուաւ : Իր մահուան օրը ընդհանուր սդոյ օր ե-  
զաւ կոսդանդնուազօլսոյ համար, Սօւլթանից սկսած մինչև յե-  
տին հպատակը նրա մահուան վրայ լալիս էին : Հայոց Յու-  
նաց, Քաթոլիկաց պատրիարքներն ու Հրէից մեծ Խաբբին ի-  
րանց ժողովրդովը նրա թաղման հանդէսն էին կազմում : Խա-  
զաղ Յարութիւնը 1835 թուին մեռաւ : Տիւղեանց գերդաս-  
տանը դրամանոյը վարումէ, Տատեանց գերդաստանը վառօ-  
թարանը • սեղանաւորների մէջ երեւել եղածներն են, Գրիգոր  
և Կարապետ եղեարք Երամեան Եղիպտոսի սեղանաւորները :  
Ալահվերտի Օղլու, Ճեղայիրլի, Պետրոս և Գէորգ Խորասանճի  
Մաքսուտ, Ճանիկ. Միսաք, Թընկըր և Պարտիզպան :

Երկար ժամանակ, Տաճկաստանի Հայք մի աննման տդի-  
տութեան մէջ ընկլմա : և մինչև իրանց լեզուն անդամ մո-  
ռացած վերջապէս կրթութեան և ուսման հարկաւ որութիւնը  
զգացին • սակայն Կոսդանդնուազօլիս և Զմիւնիա միշտ, թէ եւ  
շատ քիչ լուսաւորութեան նշոյն իրանց մէջ պահած ունէին  
որնոր իրանց արեմտքից էր գալիս և իրանց մէջ մի քանի դր-  
բագէտներ և աստուածաբաններ գանուումէին : Կոսդանդնու-  
ազօլիս շատ անդամ: բուն Հայոց և Քաթոլիք Հայոց մէջ ե-  
ղած ցաւալի կրօնական կահւներու ասպարէզն եղաւ . այս կը-  
ուիւները շատ անդամ Յիսուսեաններից էր վեր զալի, մինչդեռ  
Զմիւնիա միշտ կապուած մնաց իր հին Հայաստանեայց ե-  
կեղեցւոյն վրայ, որոնց առջեւը հռովմայ քարոզիչներու բուլը  
Ճանքերը խորտակուեցան :

Աբտիւլ Մէծիտի վերածնիչ թագաւորութենից հետէ,


Տաճկաստանի Հայք նոր նոր արտօնութիւններ են վայելում։ Փոքր առ փոքր զգումնեն հասարակաց կրթութեան և ուսուման հարկաւորութիւնն ու լաւութիւնը։ Այս վերջի տասնուհինդ տարուայ միջոցումը հարիւրի չափ աղդային դըպրոցներու կանգնութիւնը տեսնուեցաւ այս տէրութեան քաղաքներու և զիւղաքաղաքներու մէջ։ այս գովրոցներումը երկու սեռի երեխայք էլ քրիստոնէական, բարոյական և գրականական կրթութիւն և ուսումնեն սատանում։ Միայն կոսդանդնուպօլս սումն երեսունից աւելի զպրոց կայ չորս հազար հինգ հաւար աշակերտներով և տասնուհինդի չափ էլ աղջկանց դպրոց երկու հազար աղջիկ աշակերտներով, որոնք աղջի ծախքովն են ուսումն և կրթութիւն առնում և որոնց մէջ սորվայնում են Հայոց լեզուն, օտար լեզուները, ազգային պատմութիւնը։ մաթէմաթիքական ուսումնենքները, քրիստոնէութեան ուսումը աշխարհագործիւն, գծադրութիւն և երգեցողութիւն; Սուրբ գիրքն ամէն տեղ գործ է ածուում, վասն զի բարոյական դասակարակութեան հիմունքն է համարուած։ Զմիւռնից Հայոց ուսումնարանն, որնոր Արքոյն Սահակայ և Արքոյն Մեսրոպայ անուններն է կրում իր վրայ, ամէնից հռչակաւոր և ամէնից մեծն է բոլոր Տաճկաստանումը։ Իսկ աղջկանց ուսումնարանը հիմնած է կոսդանդեանց բարեպաշտ և պատուաւոր Տիկինը։ Եռուսութեանց Պողոս Պէտի և իրա եղբայր Պետրոս աղայ հարուստ, վաճառականի գերդաստանը, որմէ յառաջ է եկել Կոսդանդեան Տիկինը, Զմիւռնից ուսումնարանի պահպանութեան համար հարկ եղած գումարին մեծ մասը տուած է։ Կոսդանդնուպօլսումը Տիւղիանց գերդաստանն էլ նշանաւոր եղած է Հայ Քայլովիք աղջկանց համար առանձին մի ուսումնարան հասաւատելով։ Այս երկու քաղաքներից յետոյ գալին են, երգրում վան, Գիւրսէքիր, Եղեսիա, Տրաբիդոն, Թօխամթ, Կեսարիա, Պրուսիա, Ամսուիա, Քէօթահիա Խղնիսիտ, (Արկոմիտիա) Անդրբանաւպօլիս, Վարնա, Թէքիրտաղ, Ատանայ, Տարսոն, Մուշ, Անթէք, Ալին, Սեբաստիա, Էնկիւրիւ։ և ուրիշ քաղաքներ, որոնց մէջ մէկ կամ երկու գովրոցներ կան տղայոց և աղջկանց համար։

Եղիպտոսումը, տեսնումնենք նրա վերածնիւ Մեհչեմէտ

Ալե փաշայի ժամանակը, Պողոս Պէդ Եռւսութը իրա արտաք  
քին գործոց պաշտօնեալին, որ մեծ արժանաւոր և երեւելի քա-  
ղաքագէտ մարդ էր, և մեծ ժառայութիւններ է արած Ագիսա-  
տոսին 1835 և 1840 թուերու պատերազմներին, նմանատես-  
չուապար Պէդը, որ նոյն ասպարիզումն երեւելի է Թերկուան Էլ ազ-  
գով և կրօնով Հայք են : Սայիտ փաշայի այժմեան պաշտօ-  
նեայն Էլ Ստեփան Պէդ անունով մի Հայ է :

Պէտք է յուսանք, որ Ֆրանսիոյ Անդզիոյ և Տաճկաստանի  
ընդդէմ հիւսիսի հսկային արած փառաւոր պատերազմից  
յետոյ, 1854-ից մինչև 1856 Տաճկաստանի քրիստոնեայք առ-  
հասարակ, և մասնաւորապէս Հայք մի նոր թուական կվա-  
յելին, և իրանց վիճակը քիչ շատ կլաւանայ և իրանց մը-  
տաւորական և ընկերական կործանուած վիճակից կվերականու-  
նին և իրանց տղիսութենից և թշուառութենից կարծնին :

Տաճկաստանից յետոյ Ռուսաստանն է գտլի, որ տասնիննե-  
րորդ դարու սկզբիցը փոքր առ փոքր Հայաստանի մի նշանաւոր  
մասին 1,250,000 բնակիչներովը՝ որոնց 500,000 Հայքին տէր եւ-  
զու: 1828-ից, որ այս երկին Ռուսայ տիրապետութեան տակն  
ընկնելուն տարին է, իրաւ է, որ Հայոց նիւթական և ընկե-  
րական վիճակին մէջ մի կարևոր լաւութիւն եղած կայ ա-  
զատուելով Քրիստու և Պարսից տուած նեղութիւններից և  
հարստահարութիւններից, որոնց նեխարկուած են միշտ հա-  
րեան եղաղ երկիրներու քրիստոնեայք, և թէ որ Ռուսաց պաշ-  
տօնապետներու տուած զրկողութիւնն ու կաշառակերութիւնն  
ամէն վայրկեան նրանց չկողոպաէ Հայք համեմատաբար եր-  
շանիկ կլինէին և իրանց ապահովութիւնն ու հանգստու-  
թիւնը կվայելէին: Կաշառակերութիւնը Ռուսաց պաշտօնա-  
վարաց տառներորդ մասին ութերորդին յատուկ բնաւորու-  
թիւնն է, այնպէս որ որչափ կառավարութիւնը բարի կամե-  
ցողութիւն ունենայ ամէն աեղ արդարութիւնը տեսնելու և  
նուաճուածները պաշտպանելու, կառավարիչներն ու երկրորդ  
կառավարեչները, դատաւորներն և քաղաքապետներն արդա-  
րութիւնն ու իրաւ ունքները հրապարակաւ կվաճառեն: Քանի  
որ այս չարիքը կշարունակուի Ռուս պաշտօնավարաց մէջ գիւ-  
ղացոյ վիճակն այսօրուայ վիճակիցը երբէք լաւագոյն չըլի:



## Խ Օ Ս Ք

# Դ վ ե ր ա յ մ ա հ ու ա ն Ա ւ ե տ ի ք Ա ղ ա յ ի Տ է ր Մ կ լ ո շ ե ա ն ո ց Ա գ ու լ ե ց ւ ո յ :

## Ի Դ Ի Մ Ա Զ

Պ Ե Ր Ո Ն Մ Կ Բ Տ Ջ Ի Ռ Ո Ս Տ Ո Մ Ե Ա Ն Ց

---

Եթէ քրիստոնէութեան, մխիթարական, վարդապետութիւնն աղահովացրած չլինէր մարդուս ապագայն, եթէ քըրիստոնէութեան սփոփիք աջը բացած չլինէր մարդուս անմահութեան և յաւիտենականութեան խորհրդաւոր գրունքը, եթէ քրիստոնէութեան աննկուն զօրութիւնը կանգնած չլինէր իրան յաղթական դրոշը մահուան կործանեալ և քայքայեալ աւերակների վերայ, եթէ քրիստոնէութիւնն իրան համարձակախօս առաքեալի բերանով աղաղակած չլինէր, «Ո՞ւր է, մահ, յաղթութիւն քո, ո՞ւր, դժողք, խայթոյ քո» : Կարձատեմ, բարեբաշտ ունկնդիրք, եթէ այս անցաւոր աշխարհից յետոյ չլինէր մարդուս առաջին և մի անտես և յաւիտենականը, որչափ արտասուաց և ողբոց արժանի էր մարդուս երկրաւոր, յոզդողդ և անհաստատ վիճակը. որչափ ցաւակցութեան արժանի էր և մեր նորող հանգուցեալ բարեպաշտ և

աղքամէր Աղայ Աւետիք Տէր Մկրտչեանցը՝ որ իր արբուն եւ րիաասարդութեան մէջ կնքեց իւր երկրաւոր կեանքը մի բուպէի մէջ թողնելով ամենայն բան։ Ո՞րչափ դառն և ո՞րչափ անտանելի պէտք է լինէր սպնորինակ հրաժարականն աշխարհից, եթէ մի առաւել երանաւէտ կեանք սպասելիս զինէր մարդուն։ Ի՞նչքան տարաբազդ կլինէր և թշուառ, եթէ այսու կենօք լինէր միայն յաւսացեալ։ Բայց քրիստոնէութիւնը պատառել է այս թշուառութեան վարագոյրը, նա յարութեան յուսով քանզել կործանել է այն ցանկը, այն հաստ պատր, որ մահը քաշել էր անցաւորիս և յաւխենականի մէջ։ Ուստի և մենք քրիստոնեայքս անկասկած ենք, որ մարդուս բարի գործքերը, մարդասէր և ողորմած արարմունքները, իւր հայրենեաց և հայենակցաց համար զոհած նուիրաքերութիւնը, իւր կարօտ եղբարց արտասունքը սրբով ողորմութիւնքն անսպասելի ճռխութիւնք են մարդուս համար երկնքումը, անմահ և քաղցր յիշատակ ունին նաև, երկրումս, սրանք այնպիսի գանձք են, որ մահը չէ կարողանում յափշտակիլ մարդուս ձեռքիցը, սրանք այնպիսի ճռխութիւնք են, որ մարդուս մարմնոյ հետ դադաղում չեն ամփոփում և հողը չեն մըտնում, այլ մնում են մարդկանց սրտերումը, թե են առնում, թռչում մարդուս հոգւոյ հետ զէպի երկինքը և երկնքումը ժողոված այն զանձն են կազմում. որոց համար մեր Տէրը աւաց. «Ո՛չ զողերն են յափշտակում» և ոչ ցեցն ու ժանգն է ասպականում։ Մահուան յիշատակը դառն է, ասել է իմաստունը, դառն է, որովհետեւ հրաժարվում է մարդս իրան սիրելիներից, իրան որդիքներից և ընտանիքից, իրան ծնողներից ազգականներից, և բարեկամներից, բայց այս դառն յիշատակը քաղցրանումէ ուրիշ անմահ յիշատակիներով, առաքինութեամբ բարետաշտութեամբ, հայրենասիրութեամբ, ուուրբ և արդար խղճմատանօք։ Մարդուս ձեռքին է ուրիշն բարեպաշտ ունկնդիրք ունենալ զառն կամ քաղցր յիշատակ, ունենալ մահացու կամ անմահ զործքեր, ունենալ զովեստ և պարսաւ։ Այսպէս ևս սիրելինամ հանգուցերից վերայ պէտք է մասածենք։ Յայտնի է մեզ ի Տէր հանգուցերից կեանքը, գործունէութիւնը և բոլոր արարմունքն' ըստ իրան մասկութիւնից մինչև մահու ան բոպէն։

Եթէ ունի առաքինի սիրազործութիւններ, եթէ ունի իրան հարստութեան չափ և մեծագործութիւն յօդուտ աղդի և եկեղեցւոյ ուրիմն աւելորդ կլնին իմ ակար լիզուիս զովեստաները, վասն զի մարդուս ամենամեծ և պերճախօս քարոզիչը իրան գործն է, \* ինչպէս առումէ առւրբ Գիրըլ. չԳործք քո

\* Այս տեղ մեր ունկնդրաց տեղեկութեան համար յառաջ կրերենք ի Տէր հանգուցելոյն Ազայ Մկրտիչ Տէր Մկրտչեանցի բարի բարի զործքից մի քանիսը :

Հին Նախիջևան քաղաքումն աղբիւր հանեց իւր սեփհական ծախքով և երեք տեղ քաղաքումը բաժանելով ծողովրդեան :

Ցիշիալ քաղաքի ժողովուրդը շատ նեղութիւններ էին կրում իսաների կողմից, միշտ իսաների հետ վճռում էր վայն օգնութեան Հայերի :

Գողթան գաւառի Ազուլեաց մէջ ուսումնարան չի կար, երեխացքը ուսումնից զորկ էին մնաւ, ուսումնարան բաց արեց երեք լիզուտ, Հայերէն, Ռուսերէն, Պարսկերէն, ժողովուրդն էլ կից էր, բայց մեծ գումարը վճարողն եւ զլիսուր վերաբեսուչն ինքն էր :

Ցիշիալ Գողթան գաւառումը հասարակութեան ընթերցարան բաց արեց ժողովուրդն էլ կից էր, բայց առաջի մեծ զումար վճարողն ինքն էր.

Քանի տարի էր աշխատում բոլոր Ադուեաց Հայ վաճառականներին համար ընկերութիւն կազմէլ, ինչպէս Յւրուպայ՝ այն կերպ ընկերութիւն, բայց ժողովրդեան անհամուձայնութիւնիցը չէր յաջողութ, բայց շատ յոյն կար, որ վերջը այս ընկերութիւնը կանարուէր, վասն այն, զի միշտ աշխատում էր, որ մեր աղզի միջին օրինակը ընի :

Պարսկաց սահմանումը սուրբ Ստեղամոս Նախավլայ անուանեալ վանքին Զանգակաստանը շինեց :

Պատերազմի ժամանակը հարիւր հեծեալ զինուոր տուեց Հայերիցը Տէրութեան իւր ծախութով, որ Բայազիդի կողմից Հայերը Տաճիկների արշուած նեղութիւններիցը պահպանեն, սրանք Հայերը շատ հանդիսա պահպանելոց յետոյ մէկ տարի այն տեղ պատերազմիցն, մէկ մարդ էլ չի զոհուեց իւրեանց միջից այնքան յաջողակ էին ու Տէրութիւնիցն էլ պարզեւներ ստացան :

Երեւան քաղաքի օրիորդաց ուսումնարանումը միշտ որդեղիր էր պահում Հայ օրիորդից, վերջումն էլ 2000 մանէթ տուեց օրիորդաց ուսումնարանին, որ Հայոց օրիորդք ուսում առնեն. ընդ հակառակն Նահանգապետը Ռուսաց օրագրով հրատարակել էր թէ պետք է Տաճկաց օրիորդք էլ կարգան, այս մասին Նահանգապետին հետ մեծ զբաղրութիւն բացարաւ, վերջը Նահանգապետը վախուեց նւ ինքն էլ վախճանվեցաւ ըստ որում մնաց թերի :

օքնեսցեն զքեզ : թողնենք ուրեմն . որ խօսին սրա համար , իրան գործքերը իրան արարքը և միայն մաղթենք Աստուածանից , որ մսիթարի սորա ծերունի հօրը վշտահար ընտանեացը , մատաղահաս զաւակներին . իսկ հանգույելոյն արժանացնի իրան երկնից արքայութեանը ,

Թիֆլիդի Հայոց Ներսիսեան դպրոցումն ունէր որդեզիր , որ հւսումն աւարտելոց յետոյ ուղարկեց թեոդոսիա ուսում տալու , որ այժմն էլ այն տեղ է , որ մտաղիր էր Թիոդոսիայումն էլ աւարտելոց յետոյ ուղարկել Եւրոպայ ուսում տալու ,

Դըրիման Հայր Մկրտիչ վարդապետը , որ ժամանակ , որ եկաւ Թիֆլիդ , Ղևներալ Արձրունին միջնորդ էր նրա , Վանայ ուսումնարանը աղանովացնելու , Թիֆլիդի երեւելի հարուստներին չի նայելով ինքն առաջին ստորագրուողն եղաւ 500 մանէթ տալու \* ,

Մեծ յոյսեր կար որանից վասն աղզի օգնութեան , բայց մահը թոյլ չի տուեց , մինչի մահնուան ժամանակն էլ յօյս կար , բայց մահն անժամանակ պատահեց տկարութեանը նայելով . Ագուլիմից ուզդուեց Թիֆլիդ գալու բժշկուելու համար , բայց Նախիջեւան համանելոց տկարութիւնը սաստիանումն է կրկնին յիտ է դառնում Ազուլիս , համարեա թէ բոլորովին իր զգաստութիւնը կորցրած , համանելոց յետոյ հազիւ թէ ուշքի է զալիս Քրիստոնի տղիւնը և մարմինը ընդունում է և զինի հինգ ժողին աւանդում է , անգութ մահն այնքան միջոց չէ տալիս , որ գոհեայ սրտի խորհուդները յայտնէր , որ զոհեայ առաջին երեւելի յիշաստակներ թողեր ապարացին համար :

Խեղճերուն արած օգնութիւններին թիւ չի կայ . Ագուլեաց ժողովուրդը երբեք դատաստանատուն գնալ չի դիտէին , եթէ մէկ վեճ լինէր կրային մօտը արդարութեանմբ վճիռը կրտանային , ինչ երեւելի դործ որ լինէր եւ ինչ տեղ էլ որ պատահէր խաղաղասիրութեամբ կը կատարէր :

\* Բայց այս ձեռնարկութիւնը , որ պիտի կատարուէր միջնորդութեամբ Ղեներալ Արժրունոյն , իր վախճաննը շոնեցաւ :

Ծ. Խ.

## Ճ Ա Ռ

Որ ասուել է Գալրիմու Աղջային Ուսումնարանի վերանորոգութեամբ բացուած օրումը զէպի Նորին Սրբազնութիւն Գէորդ Արքեպիսկոպոսի եւ Շնորհափայլ Առաջնորդին բոլոր Ատրապատականի եւ զէպի ընկերացեալ մեծարոյ անձինք նոյն Ուսումնարանին :

~~~~~: ~~~~~

Ընդհանուր տիեզերքում տարածուած լուսաւորութեան ձայնին՝ զձեզ Արբազան Հայր<sup>1</sup>, և մեծարոյ տեարք, այսօր այս խորհրդաւոր յարկին<sup>2</sup> տակը կամչելը՝ բոլոր այս քաղաքիս և Պարսկաստանի և զրեթէ հանուր յառաջադիմութեան յանշացող Հայ ազգին համար՝ արդէն մին նոր ցանկալի աւետիս է պատրաստած և մին բարի նախանձ։ Այս ցանկալի ճշշմարտութեանը վկայ՝ չեն միմայն այսօր Զեր այս խնդալից ակումբն և յուսալից աչքերն, որ վաղուց այս գերապանծ և խորհրդաւոր շէնքին վերայ սքանչացած, իւր ներքին հրաշալիքն է՝ այսինքն ուսման յառաջադիմութիւնն և կը ցանշային տեսնել մին օր, զոր Աստուածային նախախնամութիւնն սահմանած էր պատկելու Զեր ամենեցուն յոյսը և փափագն, այլ նաև նոյն այս լուսատու յարկիս, այսինքն Ուսումնարանիս ծննդեանը պատմութիւնն և Զեր, մտաց յիշատակն, քո Սրբազն Հայր, սուրբը և խաղաղասէր աջոյդ ազգին և ազգին որդւոց վերայ սփռած նոր շնորքն, և Զեր ամենի վերջապէս մեծարոյ Տեարք, աղջամէր և ուսումնատէր սրտի և մտաց միութեան արդասիքն։ Խոկ իմ—իմէլ բիւր երանութեան արժանի ձայնս, որ եթէ Զեր ներող ունկնդրութենից պատիւ

1 Նորին Սրբազնութիւն Գէորդ Արքեպիսկոպոս վեհապետեան վիճակաւոր Առաջնորդ բոլոր Ատրապատականի։

2 Ցուցանում է Գալրիմու Աղջային ուսումնարանը։

գտնի, պիտի հեշի այսօր Ուսումնարանի նոր պայծառութեամբ  
բացւող զաներին հետ և նորան ցնծացող սրահներին արձաւ  
գանաց հետ, ցնծալի հանդիսիս այն նիւթը, որ ուսումնա-  
րանիս հիմանց հետ հաղիւ ծնած մի տարաժամ մահուան  
զոհ էր ելած, բայց այսօրուայ, մի հօտ և մի հովուի քրիս-  
տոսատուր հրամանովն և ազգաշխին միութեան խրախուսա-  
նաց ձայնովն՝ կրկին կենդանանալով Ուսումնարանիս գաներին  
մին նոր սիրոյ և յուսոյ յաղթանակով բացել և ամեն լու-  
սասէր սիրոտ ուրախակցութեան է կանչել:

Եւ յիրաւի, ումչէ երանի, ովչի ինսդար ձեզանից, մե-  
ծարոյ Տեալք, յիշելով այս ուսումնարանին ցնծալի ծնունդն  
և մութ կեանքը թողէք խնդրեմ; մսի Զեր միտքը անցեալ  
ժամանակաց սիրան և յաւիտենական յիշատակի արժանի  
թողէք, խորառողի մինչեւ այն օրերն, ուր յաւիտենականաց  
յիշատակի արժանի մին Սրբազնն անձին սիրտը կշռելով իւր-  
ժողովրդեան շատերին ուսումնասիրութիւնն և լուսաւ օրութիւնն  
և ցաւակցելով ու երուելով իւր աղքի օրդւոց թշուառ վիճակի  
վիրայ, միտքը շատ ազգօգուտ դիտաւ ըրութեանց և խորհրդա-  
ծութեանց ծովն ընկղմելով և հաղար դժուարութեանց վեր-  
ջապէս յաղթելով օգնութեամբ իւր հօտին՝ իւր սուրբ աջը  
կարկառեց դէպի այս ուսումնարանի հիմնադրութեանը, որ քա-  
զաքիս Հայ հասարակութեան ապագայ երջանկութեանն ե-  
ղական հաւասարիքն է և անմահ երախտագիտութեան մին  
անմոռաց առարկայ :

Այս նորին բարեյիշատակ Սրբաշնութիւնը չմուացաւ,  
սորանով ցուցանել որ իւր ազգի թրուառութիւնները հա-  
զար նեղութեամբ դարմանելն և բժշկելն՝ իւր նախօրդ սուրբ  
հայրապետաց առաքինութեանց բարենախանձ փափագներից  
մէկն էր, իւր ժողովրդեան ուսումնասիրքն յորդորելն և այս  
հոյակապ շէնքերը կանգնելն՝ իւր Աստուածակալոյն կողմանէ առ-  
ռաքելութեան և ազգեցութեանց արզ իւրն էր և իւր արիւնը  
վերջապէս սովաւ անմահ անելն իւր օրդեսիրութեանն և աղ-  
քասիրութեան անվախճան վկայութիւնն էր :

1 Նախկին վլաճակաւոր բարեյիշատակ հանդուցեալ Սրբազն իսա-  
հակ Սրբեազիսկոպոսը Սաղուննանց :

**Չը** պարծենան ուրեմն աշխարհքիս անթիւ բանակներով աշխարհակալները, թէ իրենց յաղթութիւնները մեծագործութիւնն է, և ընդհանուր շահաւորութիւն ազգային, առաջնց մին նոր թշուառութիւն պատճառելու : Քաւ լիցի, այլ մեծագործութիւն է այն անձի գործքն, որ նման այս շէնքիս՝ տկար միջոցների ծոցում, բարձրանալով և ըստ բաւականին եկամտով կենդանի մնալով, առաւօտեան արեգական պէս դժուարութեանց սարերի դլիսից ծագելով, ազգի տիրող խաւարին վերայ գուարթ մին լոյս կափուէ, և ամէնին կը պատրաստէ մին հաւասար օգուտ, ամէնքին կը լսուատանայ մի անխտիր արժանաւորութիւն, և երջանկութիւն, և ընդհանուր յառաջադիմութիւն ազգի բարեբաստութեանց :

**Եւ** ո՞վ չէ համոզուած, որ մին ուսումնարանի վախճանն այսքան շահաւետ է և միշտ այսպէս փառաւոր : Ո՞ր ազգի պատմութիւնը չէ սորտն վկայ, և ո՞ր դար չէ թողած անմահ մին յիշատուկ ուսման ծնած օգուտներուն : Ոսկեդար, դու Հայաստանի, պարծանք ազգային, պարծեցիր դունախ այն ուսման ծագած լուսովը, որ Հայ ազգին վերայ սփռեցիր, այն լուսովն եմ ասում, որով նախ Սուրբն Սահակ և Սեպուպ անմահացան, և իբր կրկին ջահ փայլելով ազգին մէջ՝ Հայաստան ուսման լուսաւորութեամբ աւելի լաւ ճանաչեց, զիւր Աստուածն և զԱստուածպաշտութիւնն, իւր Հայրենի ծընունդն և մայրենի լեզուն, իւր Հայրենեաց հին փառքն և մեծութիւնն և օտար ազգաց հանդամանքներն, իւր ազգի և Հայենեաց արժանաւոր սէրն, և քաջութեան ասպարիզութիւն Հայրենեաց իրաւանց պաշտպանութեան համար մեռանելն, և Շշմարիտ հաւատոյ վկայութեան համար Քրիստոսի սիրով վառուած աներկիւղ արիւն թափելը :

**Այս** լոյսն եմ ասում Արբագան Հայր, և մեծարոյ Տեարք որ Հայ ազգն այր գրելով և բեն կարգալով թօթափեց ամէն տեսակ տղիտութեան խաւար, և գիտութեանց և իմաստութեան լուսով յառաջանումէր մին ժամանակ դէպի կարդէն ազգաց, որ կը պարծենային մինն իւր Տրովադայով, մինն իւր Աթենքով, մին իւր Հռովմավ, մինն իւր Աստուածագէտաներով և Աշխարհագէտաներով, մին նիւր Փիլիսոփաներով և Գերիթ ողներով

և մինն վերջապէս ՚իւր կրօնասիրութեամբ և հրաշալի նաև հատակներով և անյաղթելի դիցազուներով :

Այս լոյսն եմ առում, վերջապէս, որոյ ծաղիկ հասակին բիւր պատերազմաց և աշխարհակործան արշաւանաց հեղեղ ներն և խաւարածին ծովն միմիայն կարաց յաղթել կործանելով իւր պաշտպան թագ և գաւազանը Արամեան, գերի տալով ընդհանուր ազգն, քանդելով գոլոր Հայստան, վերջացնելով մեր Հայկերը, մեր Արամերը, մեր Տիգրանները, մեր Տրդատները, մեր Վարդանները, զրկելով զմեզ՝ մեր մեծ Ներսէսներից, սուրբ Սահակներից և ընկղմելով զմեզորը՝ մին այնպիսի թշուառութեանց և խաւարի տհագին անդնդի մէջ զոր միմիայն Խորենեան աչքը կարողէ բատ արժանաւոյն լալու ողբալ և Եղեշէի սիրտ ու գրիչը :

Ահա, սորանք էին մին ժամանակ մեր շքեղ հայրենեաց Հայստանի վայելած երջանկութիւնները, սորանք էին ուստան շնորհած երեխայրիրը, զոր մեր նախնի հարք, թէ հարուստ և թէ աղքատ, մեծ և պղափի հաւասար իրաւամբ, համաձայն սիրով սկսած էին ճաշակել զոր և իմաստուն Խորենեան, հրաշալի Եղեշէի և այլոց անմահ պատմութեանց մէջ ևս մեզ աւանդելու չմասացան, վկայելու յաւիտենական յիշատակելով, թէ ուսման օգուտան ինչքան է մարդկային ազդի համար, մանաւանդ, Հայ ազգին, որոյ ընդունակութիւնն ըստ ամենայնի առաւելէ քան այլ ազգաց :

Թողնենք հապա անցելոց պատմութիւնները, թող մեզ վեհ կայեն ներկային արդիւնքներն, այսինքն այսօր իսկ մեր աչքովը տեսած ուսման պտուղները, մեր ականջովը լսած սյուլուսուրը գարուս գիտութեանց ծնած հրաշալիքները : Ո՞վ կը հաւատայ, թէ որ տեսած կամ փորձած չըլի, որ այս տեղից մինչեւ թէ Հրան և մինչեւ Ամերիկայ անդամ մին քանի լողիում մին մետաղէ թելով խօսակցութիւն կարելի է, պարզ մին շոգւոյ զօրութեամբ ահագին մարմիններ՝ նաւեր շարս ժելով, և ահաւոր ովկիսանունների ալիքներուն հետ խաղալով մին աշխարհքէ միւս աշխարհք երթալը մին քանի օրում հնար է. ով չի զարմանար, որ երկնից երեսում թռչող հբառ վառ կայծ ակները պարզ մին մետաղով իր ճանապարհից հա-

նել և հողի տակում թաղելը կարող է մարդը : Ո՞վ սովորացրեց մարդոյն, որ պարզ մին ջրի շոգւոյ զօրութեամբ՝ ահաւգին կառքեր կայծակի նման երկրի վերայ թացնելով, ահաւգին անապտաները և անանցանելի սորերն արհամարհէ, և հարիրաւոր օրուայ ճանապարհը, մին երկու օրուայ ճանապարհորդութեան իւր խաղալիին անէ : Ով հնարեց, որ մին հեղուկով մինչեւ երկինքը բարձրանայ երթայ մարդ, և վերադառնայ—ոչ ապաքէն ուսմունք գիտութիւնք : Եւ այլ ո՞ր մէկն ասեմ: որ դուք չգիտենաք կամ չենեք լսած, և իմացած, որ այդ ամէնն ուսմանց պառվներն են :

**Չը** պարծենայ ուրեմն, ոչ մին պատմութեան և ոչ մին դար այս խննևածներորդ դարուս և ապագային մօտ, ուր ծնածենք մենք, ուր ուսմամբ պայծառացած և գիտութեամբ լուսաւորուած Եւրոպայի ամէնախեղճ՝ գեղացին անգամ զինքն աւելի երջանիկ է համարում քան թէ իւր նախնի գուքս և կոմսերը, քան մեծն Աղեքսանդր և Կարոլոս քան զչառմայ կայսերները, վասն զի իւր ծնունդն աւելի մին լուսաւոր դարումն է, իւր կեանքն աւելի. ազատ և ապահով, իւր գիտութիւնն աւելի ընդարձակ, և իր մաշն աւելի խաղաղ և բը նական և իր յիշատակը վերջապէս աւելի փառաւոր և երանելի:

**Այս,** հասցրուց ուսմունքը լաւագունի և գերազանցութեան մարդոյ կենաց զանազան վիճակները, սերմանեց և հընձնումէ ընդհանուր ազատութեան սկզբանց ցանկալի բերքերը գրելով ամէն սրտի վերայ բնական օրինաց . և Սուրբ Աւետարանի հետ սէր, միութիւն, հայրենիք, և կրօնք, հաւասարակշութիւն բարեաց, կարողութեան, և փառաց, և միաբան յառաջադիմութիւն ի կատարելութիւն ոգւոյ և մարմնոյ և ի նմանութիւն Արարչին մարդոյ :

**Այս** է ահա ընդհանուր Եւրոպիոյ վերայ տարածուած այն լոյսը, որ ուսմանց ջահերից ճառադայթելով, այն աշխարհքն արած է աշխար հրաշալիաց, արեգակ լուսատու և օրինատու ազգաց : Երանի՝ ուրեմն այն աշխարհքին որ նորան պէս պայծառութեան կը ցանկայ, որ նորան փառացը նաշխանձաւոր է, ինչպէս Ամերիկայ և Աֆրիկան արևափելի և

զերքները : Երանի՞ այն աղղին որ նորան մէջ վայլած լուս սոյն մին Ճառադայթն էլ դէպի իր հայրեքիը կը դարձրնէ, և երանի՞ էն մարդոյն՝ որ իր անձի և գոնէ իր որդւոյ համար՝ էնպիսի մին ջանք ունենայ և մին վափագ :

Երանի՞ ուստի և հազար երանի՞ այլ երկիրների մեր Հայ աղղին էլ որ նոյն վափագով, նոյն իմաստութեամբ, ձայն տալով սիրոյ և միութեան, սիրելով ազգ և հոյրենիք ցանկաշնալով վառաց և կատարելութեան, և յաղթելով բիւր դըժուարութեանց, սկսած են անխնայ գանձերով անխսիր ընկերութեամբ, միաձայն խրախուսանոք, միակամ աշխատանօք բազմութիւ ուսումնարաններով և տպարաններով և այլ կարգ կարգ ուսումնական միջոցներով և արտաքին ու ներքին բառ բեկրթութեամբ՝ իրենց քայլերն զէպի ընդհանուր լուսաւորութիւն ուղղել, այնպիսի երկիրներում ուր Հայ աղղին խառարեցուցիչ շղթաներն աւելի ժանգուած էր, ուր ազատութեամբ համարաշնորհ մերինից աւելի էր և հպատակ աղջաց իրաւունքն աւելի ուսնակոխ վախելով հպատակութեան օրէնքն ի կապանս զերութեան :

Ուրախակից ենք մենք, Արքազան Հայր մեր հայենակցացն և նորանց յառաջադիմութեանը, բայց ինչ վորքը օգուտ էր մեզ այդ ուրախակցութիւնը, թէ որ քո շնորհաբեր գալուստը քո որդեսէր հովուութեան դաւազանը խնայած եներ մեզ նից Աստուած, որ այսքան ազգին որդիքները խաղաղասիրութեամբ սիրեց, և ամէնքն իմի սէր և միութեան կանչելով (տացէ Տէրերկարատեև լինի) ամէնի սրտի մէջ բորբոքեց միաբան յառաջադիմութեան հուրն, այն հուրն, որ հանուր Առարպատականի Ատրուշտնաց կրակով ծածկուած և խեղդուած էր և նորան հետ վաղուց մնամիր դարձած, այն հուրն, որոյ լոյսն այս հոյակապ ուսումնարանին մէջ մտադիր ես վայեցնել մեր Արեգակնակայլ Շահին Հայ ազգին վերայ սփռած շնորհքները դատարկ չանել նորան շնորհած ազատութեան պարզեն արդիւնաւոր անել. քո հաւատացեալ երջանկութիւնն և մեր Վեհապահուայլ Շահին Հայ ազգին վերայ սփռած ուրախութիւնն յաւելուլ ու առ ընդհանուր Հայ ազգն առ

ւետաւոր լմնել այս մեծարոյ ընկերութեան և ազգին փառ փաղը պատկել և քո յիշատակն անմահ անելով, քո օժեալ ճակատին պատրաստել բիւր երկնային պոակներ :

Ցնձա՛ ուրիմն Ազգ և Ուսումնարան, խնդացէ՛ք և դուք մեծարոյ Տե՛ղը, պարծեցէ՛ք յաւերժ Գերտրդեսէր հոգւովն, Զեր Առաջնորդին ջանքերովը և Զեր ուսումնասիրութեամբը, զի լուսաւորութեան Գեր փափաղը մեր ազգի մեծ և առաջին ձեռնարկութիւններիցը մէկն էր, և հազար անձի բարի նախանձ բերող, Զեր որդիքն իմաստուն անելն իմաստանյն գովածն է, ու Զեր տունը հաստատել և ձեզ մինչեւ ի մահ ուրախացնելէ : Ուրախացէ՛ք, զի ձեր յանածն ապառաժի մէջ չի ընկնում այլ ուսման դաշտից Զեղ և Զեր որդւոցը, Վոխադարձ մին երջանկութեան համար բիւր բարիք և պըստուղին պէս անանց չէ և շահաւետ ձեր որդւոց համար :

Ուրախացէ՛ք, վասն զի ձեր ոչ մին դորձք այդ Զեր գործ քին արդիւնալից իմաստութեանը չի կարող հաւասարել, և ոչ մին ձեր շնորհած անցաւոր բարիք ուսման դիտութեանց լեզուագիտութեանց և կրթութեան պտուղներին պէս անանց չէ և շահաւետ ձեր որդւոց համար :

Ուրախացիք նաև գու, Յարդոյ Վերատեսուչ<sup>1</sup> մանաւանդ թէ պարծեցիր յաւէտ քո այդ ազդասիրութեամբ յանձն առած զժուարին՝ բայց անցիալի և գեղեցիկ պաշտօնովդ, այդ պաշտօնովդ, որ այնքան արժանաւորութիւն և իմաստութիւն կը պահանջէ, այդ պաշտօնովդ, յորմէ որքան ուսումնարաւնիս այսինքն քո ընկերաց զաւակաց օգուտն և վնասը կ'կախուին, այնքան ևս քեզնից ազդասիրութիւն և նորանոր անախոնջ խնամքներ վայելելու կաղասուի, որով ամենեցուն ընդահաւետ յոյար պսակուի :

Ուրախացէ՛ք և շնորհաւորեցէ՛ք ուստի մեր Սրբազն Հօր այս նոր շնորհըն էլ, մաղթելով երկնաւորէն Նորին Սրբազնութեան սուրբ աջոյն երկայնակեաց հաստատութիւն : Շնորհաւորեցէ՛ք Ուսումնարանիս գուներին նոր պայծառութեամբ և միութեան յաղթանակով այսօր բացուելն, շնորհաւորենք

1 Պարոն Վարդան Նազարեէկեանց :

և Ձեր որդւոց ապագայ երջանկութեանը հիմնարկութիւնն և ուսումնասիրացդ հանդէսն՝ ի յիշատակ մեր հանգուցեալ Սըրաբաղան Հօր ի հաստատութիւն անասան Ձեր միասիրա միաւբան ազգասիրութեան և բարենախանձ յառաջադիմութեան և յուրախութիւն ընդհանուր Հայ ազգին և իմ խոնարհութեան :

Սամուէլ Կիւլզատեանց.

Ի 5 Փետրուարի 1863.

ի Դավիթէժ:



Փոս ու մանըր իւր աչքէր՝  
Վերան ցանուած թաւ ունքէր՝

Միշտ կիսաբաց քընած էր  
Թէ զուր զարմանք չընած չէր :

**Զեղոտ նիհար իւր դէմքին՝**  
**Նեղ ու տափակ ճակատին՝**  
**Եւ սուր կզակին հաւասար,**  
**Մին քիթ ունէր սըրածայր :**

**Ի՞նչ որ ուտէր ու խըմէր՝**  
**Թէ և բերանն հեշտ զընէր՝**  
**Կը թաթախէր կը ներկէր**  
**Առաւել քիթն քան ձեռքէր :**

**Կոշտ ու կախուած շըրթունքնէր**  
**Երըր ջուխտ հաստ չըուաննէր՝**  
**Միշտ կիսաբաց իւր բերնին**  
**Ո՛չ թէ դուռ, այլ պատ էին :**

**Իւր մօրուքն ու լնջացքնէր,**  
**Որ օրերով չէր սանտրուեր.**  
**Թէ մաղէր՝ թէ ու մացառ**  
**Թող քեղ ասի Մանկասար :**

**Իսկ իւր հագուստն կեղտ տարած՝**  
**Ալրից թափուած՝ ճըղատուած՝**  
**Թէ չելնես ևս դու տեսած,**  
**Տեսածի պէս կաս հաշուած :**

**Բայց ի՞նչ պէտք է դեռ ասեմ,**  
**Ի՞նչ գոյն հիմի գործածեմ,**  
**Որ տըխմարին նըկարեմ,**  
**Արարք խօսուած փուչ անշէն :**

**Թէ քեղ ցուցի մին անբան՝**  
**Գարի ուտող ու գարման,**  
**Ել ի՞նչ կ'հարցնես իւր ձայնիցն,**  
**Ի՞նչ կ'սպասես համետիցն**

Սամուէլ կւլգատեանց .



Ա՛լս իմէլ ի՞նչ փառքըս մընաց  
թէ ոչ երկումս էս ողբս անանց . . .  
Ես գըմնդակ ու դառն մահուամբ,  
Եւ իմ գառնէրս էդ խեղճութեամբ:  
Այսպէս և ոչ վերջին բարե  
Տալ կարացին մեր կենաց սե :

Լըսի՞ր, էլե Շահապիլան  
Մին նոր ողբ և կոծ Արամեան:  
Երբ դու բիւրուց բիւր գիւցազանց  
Վառեալ զինեալ սէդ Արամեանց՝  
Մեր զընդերուն վեհ բնակարան  
Էիր հազար փառաց սեզան՝  
Ե՞րբ դու տեսար զամնօրէննէր  
Ծուցումդ անեն էսպէս զոհեր . . .

Սամուէլ Կիւլպատեանց:

ԽՄԲԱԳԻՐ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԳԵԱՆ.

ՀԲԱԾԱՐԱԿԻՉ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԵՖԻԱՃԵԱՆՅ

Дозволено цензурою. Тифлисъ, 30 Августа, 1863 г.